ՄԻՔԱՅԵԼ
ՄԱԼԽԱՍՅԱՆ

ՕՇԱԿԱՆ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

9(47.925)
Մ-16

ՄԻՔԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ

ՕՇԱԿԱՆ

2-րդ, լրամշակված հրատարակություն

46844

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2012

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Մ 163

Տպագրվում է
ԵՊՀ պատմության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ

Մենագրությունը հրատարակության են
երաշխավորել գրախոսներ՝
ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ, պ. գ. դ., պրոֆ. Բ. Հարությունյանը
պ. գ. դ., պրոֆ. Հ. Ավետիսյանը
ա. գ. թ., դոց. Գ. Հովհաննիսյանը

Խմբագիր՝ Լևնա Ասրյան

Մալխասյան Միքայել

Մ 163 Օշական [Հայաստանի հնագույն բնակավայրերից մեկի պատմությունը] / Միքայել Մալխասյան.- 2-րդ լրամշակված հրատարակություն. - Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2012.- 88 էջ:

Գրքում ներկայացվում է Օշականի պատմությունը՝ թե որպես Հայաստանի հնագույն բնակավայրերից մեկը և թե որպես նվիրական մի սրբավայր, ուր ամփոփված է Ս. Մեսրոպ Մաշտոցի աճյունը: Գրքում Օշականը ներկայացվում է պատմաաշխարհագրական լայն համապատկերում՝ իր տեղադրությամբ, հուշարձաններով և պատմամշակութային ողջ ժառանգությամբ: Գիրքը կարող է օգտակար լինել պատմաբանների, ուսանողների, զբոսաշրջիկների, զբոսաշրջության ոլորտը համակարգողների, ինչպես նաև ընթերցող լայն շրջանակների համար: Սույն աշխատանքը 2007 թ. հրատարակված «Օշական» գրքի երկրորդ, լրամշակված հրատարակությունն է:

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 978-9939-59-109-4

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2012
© Մալխասյան Միքայել, 2012

ՆՎԻՐՎՈՒՄ Է
ՀԱՅ ԴՐԱՏՊՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 500-ԱՄՅԱԿԻՆ
ԵՎ
ՄՈՒԱԲԲՈՏՅՈՒ՝ ՕՇԱԿԱՆ ԴՅՈՒՂԻ
ՆՎԻՐՅԱԼ ՈՒԽՏԱՎՈՐ
ՋՈՒԼԵՏԱ ԱՍՐՅԱՆԻ
ՊԱՅՇԱՒ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Տպագրվում է
«Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի կողմից
անցկացված «Երկրի մասշտաբով՝ յուրաքանչյուր ուսանողի
օգտին» մրցույթի շրջանակներում շահած միանվագ կրթաթոշակով

ԱՌԱՋԱԲԱՆ

Ծանոթանալով Միքայել Մալխասյանի «Օշական» աշխատանքին՝ ակամա մտաբերեցի երբեմնի բանավեճն այն մասին, որ լավ կլինի, Հայաստանի տարբեր մասերում հուղարկավորված հայոց մեծերին բերել ու ամփոփել Կոմիտասի անվան Պանթեոնում: Այդ ժամանակ եղան մարդիկ, ովքեր իրավացիորեն գտնում էին, որ Հայաստանի տարբեր մասերում ամփոփված մեր մեծերն ավելի են սրբացնում և նվիրական դարձնում այդ վայրերը: Այդ կարծիքի հետ չհամաձայնել չի կարելի:

Սուրբ Մեսրոպ Մաշտոցի օրինակը դրա վառ ապացույցն է: Նրա վերջին հանգրվանն Օշականում այդ բնակավայրը դարձրեց հայոց երեք գլխավոր սրբավայրերից մեկը՝ Խոր Վիրապի և Էջմիածնի հետ միասին:

Մեսրոպ Մաշտոցին Օշականում հուղարկավորելը խորհրդանշում է մեկ ուրիշ երևույթ ևս. արևելյան մանկավարժությանն այդքան հատուկ իր ուսուցչին անսահման նվիրված սանի ֆենոմենը: Սրանով էլ է յուրահատուկ Օշականը: Եվ ի լրումն այդ ամենի՝ Վահան Ամատունու վերջին պատգամը՝ ինքն այնքան արժանիք չունի, որ թաղվի իր ուսուցչի կողքին, սակայն չի էլ ցանկանում շատ հեռու լինել նրանից:

Սեղանի վրա է Միքայել Մալխասյանի հետաքրքիր նոր աշխատանքը, որն իր որակով և նշանակությամբ չի զիջում նախորդին: Հեղինակին հաջողվել է փոքրածավալ աշխատանքում Մեսրոպ Մաշտոցի կերպարի միջոցով ներկայացնել և բնութագրել Օշականը և՛ որպես ուխտատեղի, և՛ որպես բնակավայր:

Միքայելի աշխատանքներին ծանոթանում եմ առանձնակի հիացմունքով և մի քիչ էլ հուզմունքով: Հիացմունքով, որովհետև ինձ ապշեցնում են նրա ջանասիրությունն ու սկզբնաղբյուրներն ուսումնասիրելու, նրանց հետ հաղորդակցվելու անխոնջ եռանդը: Նա կարողանում է գրավոր մեծաթիվ աղբյուրների համադրմամբ նոր որակներ ապահովել: Հուզմունքով, որովհետև անսահման է ուրախությունդ, երբ տեսնում ես, թե ինչպես է սանդ օր օրի, քայլ առ քայլ փորձում նվաճել նորանոր բարձունքներ:

Մ. Մալխասյանը աշխատանքում չի սահմանափակվել միայն Օշականի մասին պատմական իրադարձությունները մանրամասնորեն ու խնամքով ընթերցողին ներկայացնելով: Ոչ պակաս հետաքրքիր ու արժեքավոր են նաև Օշականի և շրջակայքի պատմամշակութային կոթողների նկարագրությունները: Երիտասարդ հետազոտողը միանգամայն իրավացիորեն նկատում է, որ Օշականն ուխտատեղի լինելուց բացի, զբոսաշրջային լավագույն հնարավորություններն ունի:

Սիրելի՛ ընթերցող, այս աշխատանքին ծանոթանալուց բացի ուշադիր եղիր հեղինակի հետագա գործունեությանը: Հիշի՛ր. նրան մեծ ապագա է սպասվում:

ԳՈՒՐԳԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Հարգելի՛ ընթերցող, Ձեր դատին է ներկայացվում մեր կողմից հեղինակած «Օշական» գրքի երկրորդ, լրամշակված հրատարակությունը: Առաջին հրատարակությունը, որ եղել է 2007 թ., դրական արձագանք է ստացել ընթերցողների կողմից: Հաշվի առնելով ստացած դրական գնահատականները՝ գրքի առաջին հրատարակության 5-րդ տարեդարձի առիթով որոշեցինք ընթերցողների դատին ներկայացնել լրամշակված վերահրատարակությունը:

Աշխատանքի նպատակն է ներկայացնել Օշական գյուղի՝

1. ընդհանուր աշխարհագրական բնութագիրը
2. ամբողջական պատմությունը
3. պատմաճարտարապետական հուշարձանները
4. զբոսաշրջության զարգացման հնարավորությունները:

Աշխատանքը գրելու միտքը հղացել է 2004 թ. ամռանը, երբ ավագ եղբայրս՝ Տ. Իգնատիոս արեղա (այժմ՝ վարդապետ) Մալխասյանը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի տնօրինությամբ նշանակվել է Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու վանահայր (մինչև 2005 թ.), և ես ամենօրյա դպրական ծառայություն էի կատարում նվիրական սրբավայրում:

Աշխատանքի նախնական տարբերակը գրվել է 2004 թ. ամռան և աշնան ամիսներին, սակայն ամբողջացվել և հրատարկվել է միայն 2007 թ.՝ բարերարությամբ Արտակ և

Սվետլանա Մակարյանների: 2007-12 թթ. հավաքելով նոր նյութեր՝ այժմ ներկայացնում ենք մենագրության լրամշակված տարբերակը:

Լրամշակումների ընթացքում մասնագիտական խորհուրդներով աշխատանքին ճիշտ ուղղություն տալու համար շնորհակալություն ենք հայտնում ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի վարիչ ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ, պ. գ. դ., պրոֆ. Բ. Հարությունյանին:

Անհրաժեշտ ենք համարում նաև շնորհակալություն հայտնել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Արագածոտնի թեմի առաջնորդ Տ. Մկրտիչ եպս. Պողոսյանին և առաջնորդարանի աշխատակիցներին՝ աշխատանքը գրելիս մշտապես աջակցելու համար:

Այսպիսով, Ձեզ է ներկայացվում միանգամայն նոր մասնագիտական մոտեցումներով և համալրված փաստերով ու մեկնաբանություններով հրատարակություն՝ ամբողջացնելով Օշական գյուղի հնամենի պատմությունը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Օշականի պատմությունը և պատմաճարտարապետական հուշարձաններն ուսումնասիրելիս մենք ուշադրություն ենք դարձրել սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների լայն շրջանակ:

Գյուղի պատմությունն ուսումնասիրելիս նախևառաջ մանրամասն քննության ենք առել վաղմիջնադարյան հայ մատենագիրների՝ Կորյունի[1], Փավստոս Բուզանդի[2], Ղազար Փարպեցու[3], Մովսես Խորենացու[4] երկերը: Զարգացած միջնադարի վերաբերյալ տեղեկությունները հիմնականում հայթայթել ենք վիմափոր արձանագրությունների, իսկ ուշ միջնադարինը՝ Առաքել Դավրիժեցու երկի[5] միջոցով: 18-րդ դ. հեղինակներից առանձնակի ուշադրություն ենք դարձրել Սիմեոն Երևանցու «Ջամբռ» երկին[6]:

Սկզբնաղբյուրների կողքին մեծ ուշադրություն ենք հատկացրել նաև զանազան ուսումնասիրությունների, որոնց

1 **Կորյուն,** Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի, աշխ. Ա. Մաթևոսյանի, Երևան, 1994:

2 **Փավստոս Բուզանդ,** Պատմություն Հայոց, աշխ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968:

3 **Ղազար Փարպեցի,** Հայոց պատմություն և թուղթ Վահան Մամիկոնյանին, աշխ. Բ. Ուլուբաբյանի, Երևան, 1982:

4 **Մովսես Խորենացի,** Հայոց պատմություն, աշխ. Ստ. Մալխասյանի, Երևան, 1940:

5 **Առաքել Դավրիժեցի,** Պատմություն, աշխ. Վ. Առաքելյանի, Երևան, 1988:

6 **Սիմեոն կաթողիկոս Երևանցի,** Ջամբռ, թարգմ. և ծանոթագր.՝ Վ. Համբարձումյանի, պատմաաշխ. ծանոթագր. և բարտեզներ՝ Գ. Բաղալյանի, Երևան, 2003:

շարքում հարկ ենք համարում առանձնացնել Ս. Եսայանի և Ա. Քալանթարյանի՝ Օշականի տարածքում գոյություն ունեցած հնագույն ամրոց-բնակատեղիի հնագիտական ուսումնասիրության առաջին փուլն ամփոփող աշխատանքը[1]:

Վերջին տարիներին կատարված հնագիտական պեղումների արդյունքների արձանագրմամբ՝ 20-րդ դ. սկզբից մինչև 2010 թ. Օշականում կատարված հնագիտական աշխատանքներն ամբողջական ամփոփ ձևով տեղ են գտել Հ. Ավետիսյանի և Ա. Բոբոխյանի հրատարակած՝ Ուրարտուի հնագիտությանը նվիրված Երևանի պետական համալսարանի հնագետ ուսանողների համար նախատեսված դասագրքում[2], որը ևս եղել է մեր ուշադրության կենտրոնում:

Քանի որ մի քանի արձանագրությունների տեքստեր մեզ են հասել միայն Հովհ. Շահխաթունյանցի[3], Ղ. Ալիշանի[4] և Թ. Թորամանյանի[5] աշխատանքների միջոցով, ուստի այդ աշխատանքները սկզբնաղբյուրի նշանակություն ունեն՝ Օշականի պատմությունը հանգամանորեն ուսումնասիրելու համար:

Այսպիսով, սկզբնաղբյուրներում առկա տեղեկությունների, ուսումնասիրություններում առկա տեսակետների, ինչպես նաև ժողովրդական ավանդությունների համադրմամբ և մանրակրկիտ ուսումնասիրությամբ փորձել ենք ստանալ Օշական գյուղի ամբողջական պատմությունը:

1 **Есаян С. А., Калантарян А. А.,** Ошакан I: основные результаты раскопок 1971-1983 гг., Ереван, 1988.

2 **Ավետիսյան Հ., Բոբոխյան Ա.,** Ուրարտուի հնագիտություն (Ամրոց-բնակավայրեր և դամբանային համալիրներ), Երևան, 2010:

3 **Յովհ. եպս. Շահխաթունեանց,** Սփորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հտ. Ա. Ս. Էջմիածին, 1842:

4 **Ալիշան Ղ.,** Այրարատ, Վենետիկ, 1890:

5 **Թորամանյան Թ.,** Հայկական ճարտարապետություն, հ. 2, Երևան, 1948:

ԳԼՈՒԽ Ա

Օշականի ընդհանուր աշխարհագրական բնութագիրը

Վարչական կարգավիճակը՝ *գյուղական համայնք ՀՀ Արագածոտնի մարզում:*

Հեռավորությունը ՀՀ մայրաքաղաք Երևանից՝ *մոտ 25 կմ:*

Հեռավորությունը մարզկենտրոն Աշտարակից՝ *6 կմ:*

Տարածքը՝ *մոտ 17 քառ. կմ:*

Բացարձակ բարձրությունը՝ *1030 մ:*

Գյուղով հոսող գետերը՝ *Քասաղ և Շաղվերդ:*

Կլիման՝ *հիմնականում չոր ցամաքային (հուլիսյան միջին ջերմաստիճանը՝ շուրջ 25°C, հունվարյանը՝ -4°C):*

Տարեկան մթնոլորտային տեղումները՝ *շուրջ 350 մմ:*

Լանդշաֆտային գոտիները՝ *չոր լեռնատափաստանային և կիսաանապատային, որոնք հիմնականում վերակերպվել են կուլտուր-ոռոգելի հողային ծածկույթ ունեցող լանդշաֆտի:*

Բնակչությունը՝ *5 106 մարդ (տղամարդիկ՝ 48,7 %, կանայք՝ 51,3 %)[1]:*

Բնակչության քանակությամբ Օշականը ՀՀ-ում 23-րդ գյուղն է: Արագածոտնի մարզում այն բնակչության թվով 5-րդ համայնքն է՝ զիջելով միայն մարզի 3 քաղաքներին՝ Աշտարակին (20,6 հազ. մարդ)[2], Ապարանին (մշտական՝ 6,6

1 «ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները», ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2003, էջ 151: Ընդհանուր ակնարկում բնակչությանը վերաբերող 2001 թ. բոլոր թվական տվյալները բերված են նույն թվականի ՀՀ մարդահամարի արդյունքների համաձայն:

2 Նույն տեղում, էջ 144:

հազ. մարդ)[1], Թալինին (5,6 հազ. մարդ)[2] և Թալինի տարածաշրջանի Արագած գյուղին (5,3 հազ. մարդ)[3]: Գյուղերի շարքում այն բնակչության թվով զիջում է միայն վերջինիս:

Ստորև դիագրամի տեսքով ներկայացնում ենք Օշականի բնակչության թվի շարժընթացը՝ ըստ 1897 թ. Ռուսական կայսրության, խորհրդային և 2001 թ. ՀՀ մարդահամարների տվյալների ու 2012 թ. վիճակագրական հաշվարկի.

Օշականի բնակչության թվի շարժընթացը 1897-2012 թթ.



Բնակչության ազգային կազմը՝ գերակշիռ մասը հայեր են, ապրում են նաև փոքր թվով եզդիներ և ազգային այլ փոքրամասնությունների ներկայացուցիչներ:

Կրթական և մշակութային հաստատությունները՝ գործում են 2 հանրակրթական և 1 երաժշտական դպրոց, 2 մանկապարտեզ, մշակույթի տուն, գրադարան:

Բնակչության հիմնական զբաղմունքը՝ այգեգործություն. գյուղատնտեսական հողահանդակներն օգտագործվում են՝ որպես վարելահողեր, պտղատու և խաղողի այգիներ, արոտավայրեր և խոտհարքեր: Զարգացած է կաթնամսատու անասնապահությունը: Աստիճանաբար զարգանում է զբոսաշրջության սպասարկման ոլորտը:

Գործարանները՝ գինու, մսամթերքի արտադրության:

1 Նույն տեղում:
2 Նույն տեղում:
3 Նույն տեղում, էջ 145:

ԳԼՈՒԽ Բ

Օշականը նախաքրիստոնեական ժամանակաշրջանում

Օշականի պատմությունը գալիս է դեռևս Ք.ա. 3-2-րդ հազարամյակներից: 1971 թ. սկսված օշականյան պեղումները պարզեցին, որ Օշականի մաս կազմող Դիտի (Դիղի) կոնդ կոչվող բլրի վրա Ք.ա. 2-1-ին հազարամյակներում կիկլոպյան ամրոց է եղել, իսկ ավելի ուշ՝ Ք.ա. 7-րդ դ., հսկայական կալվածք է եղել՝ Վանի թագավորության ժամանակաշրջանի՝ հիմնահող, քարարկղ և այլ տիպի ավելի քան հազար թաղումներով դամբարանադաշտով, Ք. ա. 7-5-րդ դդ. դարավանդ-հարթակներով, դղյակ-ամրոցներով և այլն, Ք. ա. 3-րդ դ. անտիկ դամբարանադաշտով:

Հայտնաբերվել են բազմաթիվ արձաններ, գործիքներ, զենքեր, ոսկե, արծաթե, բրոնզե զարդեր, ագաթե ուլունքներ, խեցեղեն, փայտե զանազան իրեր և այլն:

Բլրի գագաթին բացվել է Ք. ա. 7-5-րդ դդ. ուղղանկյուն ամրոց, որի պատերը շարված են կավե շաղախով միացված տուֆե հսկայական քարերից:

Վանի թագավորության (ուրարտական) ժամանակաշրջանի պալատական համալիրները Օշականում

Ք. ա. 7-րդ դ. ներկայիս Դիտի կոնդ փոքր բլրի հյուսիսային լանջին հիմնադրվել է Վանի թագավորության մի խոշոր ամրոց-բնակավայր՝ իր պալատական համալիրներով:

Ամրոց-բնակավայրի ուրարտական ժամանակաշրջանի պատմության վերաբերյալ գրավոր սկզբնաղբյուրների (մա-

տենագրական տեղեկություններ, սեպագիր արձանագրություններ և այլն) բացակայության պատճառով պալատական համալիրների մասին տեղեկություններ ենք ստանում հնագիտական հարուստ նյութի միջոցով: 20-րդ դ. սկզբին Օշականում հնագիտական պեղումներ է իրականացրել Խ. Դաղյանը, իսկ 1920-ական թթ. ճարտարապետահնագիտական ուսումնասիրություններ է կատարել Թ. Թորամանյանը:

Դիտի կոնդում պրոֆեսիոնալ հնագիտական պեղումներն սկսել են իրականացվել 1971 թ.: Մինչև 1983 թ. հնագիտական աշխատանքները գլխավորել են Ս. Եսայանն ու Ա. Քալանթարյանը, որոնք ամփոփել են իրենց պեղումների արդյունքները՝ հրատարակելով պեղումներին նվիրված առանձին մի աշխատանք[1]:

Հնագիտական պեղումները հաջորդ տարիներին ևս շարունակվել են, սակայն որոշ ընդհատումներով: 1984-1991 թթ. դրանք ղեկավարել է Ս. Եսայանը, իսկ 2002 թ.-ից՝ Ա. Քալանթարյանը:

Ինչպես նշել ենք ներածության մեջ, վերջին տարիներին կատարված հնագիտական պեղումների արդյունքների արձանագրմամբ՝ 20-րդ դ. սկզբից մինչև 2010 թ. Օշականում կատարված հնագիտական աշխատանքներն ամբողջական ամփոփ ձևով տեղ են գտել Հ. Ավետիսյանի և Ա. Բորոխյանի հրատարակած՝ Ուրարտուի հնագիտությանը նվիրված ԵՊՀ հնագետ ուսանողների համար նախատեսված դասագրքում: 2011-2012 թթ. Օշականում հնագիտական ուսումնասիրություններ է կատարել Հ. Ավետիսյանը:

Համադրելով առկա ուսումնասիրությունները՝ ստորև ներկայացնում ենք Օշականի ուրարտական ժամանակաշրջանի պալատական համալիրների մոտավոր թվագրումը, ճարտարապետական կառուցվածքը, սրահների գործառութային նշանակությունը, հայտնաբերված նյութական մշակույթի մյուս նմուշները և այլն:

1 Есаян С. А., Калантарян А. А., Отакян Г.

Այսպես, Օշականում պեղված ամրոց-բնակավայրն ունի հզոր արտաքին պարիսպներ, որոնց հաստությունը հասնում է 2,5-2,65 մետրի: Նրա պարիսպները շարված են լավ տաշված տուֆե խոշոր քարերից, որոնք միևնույն ժամանակ շինության ներքին պատեր էին իրենցից ներկայացնում: Պարիսպներն ամրացված էին որմնահեցերով և անկյունային աշտարակներով: Արտաքին քարերի եզրերը մշակված են ժապավենաձև, իսկ կենտրոնական հատվածները՝ ուռուցիկ հարդարումով[1]:

Ամրոցն ունի ուղղանկյուն հատակագիծ՝ մոտ 0,23 հա ընդհանուր մակերեսով: Պեղումների ընթացքում բացվել են ամրոցի հյուսիսային, արևելյան և արևմտյան պարսպապատերը, արևելյան բակամասի հարավային հատվածքը, կենտրոնական կացարանները և արևելյան պարսպապատին կից տաճարը[2]:

Ամրոցը ներքին հզոր պատով բաժանվում է արևելյան և արևմտյան թևերի: Արևելյան թևի հարավային կառույցն ունեցել է մոտ 140 քառ. մետր մակերեսով 2-րդ հարկ, իսկ 1-ին հարկը ծառայել է որպես պահեստ: Արևմտյան հատվածում էլ պեղվել է խոշոր մի հոր, որը ծառայել է՝ որպես ջրավազան[3]:

Օշականում պեղված ուրարտական ամրոց-բնակավայրն ունեցել է ոչ միայն պաշտպանական, այլ նաև պաշտամունքային նշանակություն. նրա տարածքում բացվել է քառակուսի հատակագծով և անկյունային աշտարակներով տաճարային շինության հիմնապատկերը: Հատակագծային և հորինվածքային լուծումներով տաճարը Վանի թագավորության ճարտարապետության բացառիկ օրինակներից է[4]: Պեղումների ընթացքում հայտնաբերված սակավաթիվ խեցեղե-

1 Տե՛ս **Ավետիսյան Հ., Բորոխյան Ա.**, Ուրարտուի հնագիտություն, էջ 96:
2 Նույն տեղում, էջ 96-97:
3 Նույն տեղում, էջ 97-98:
4 Նույն տեղում, էջ 98:

4684

նի շնորհիվ ամրոց-բնակավայրը թվագրվում է Ք. ա. 7-րդ դարով[1]:

Օշականի՝ Վանի թագավորության ժամանակաշրջանի պալատական շինությունները, որ տեղադրված են բլրի հյուսիսային լանջին, բաղկացած են 5 համալիրներից՝ 1-ին 3-ը հյուսիս-հարավ առանցքով, 4-րդը և 5-րդը՝ դրանց ուղղահայաց[2]:

Ամենից վաղ թվագրվում է առաջին համալիրը՝ Ք. ա. 7-րդ դ. 1-ին կես: Այն կազմված է եղել 14 կացարաններից, ունեցել է 80 քառ. մետր մակերեսով սրահ, որ նախատեսված է եղել ծիսական արարողությունների և այլ խոշոր հավաքների համար, ինչի վկայությունն է հանդիսանում հյուսիսային պատի տակ պահպանված 10 մետր երկարությամբ նստարանը[3]:

Ժամանակագրական առումով հաջորդը երկրորդ համալիրն է, որի 26 կացարաններից առանձնանում է 25-րդը՝ 150 քառ. մետր մակերեսով և 8 սյուներով մի խոշոր դահլիճ՝ օջախով և զոհասեղանով: Տպավորիչ է նաև 100 քառ. մետր մակերես ունեցող և ութասյուն 27-րդ սրահը, որը, ըստ երևույթին, պալատական համալիրների գլխավոր սրբարանն է եղել, ինչի վկայությունն են հատակում պեղված 4 հորերը՝ լցված մոխրով, խոշոր ու մանր եղջերավոր անասունների ոսկորներով և խեցեղենի բեկորներով, ինչպես նաև հայտնաբերված քարե կուռքերը[4]:

Հաջորդ՝ երրորդ պալատական համալիրը՝ իր 2 կիսագետնափոր սրահներով, պեղվել է երկրորդ համալիրից 200 մետր արևելք[5]: Համալիրի արևելյան մասում բացված 4 գլանաձև վերգետնյա օջախները նույնական են Թեյշեբաինիում (Կարմիր բլուր) պեղված տների օջախներին, ինչի շնորհիվ

1 Есаян С. А., Калантарян А. А., Опакан I, с. 9.
2 Ավետիսյան Հ., Բորոխյան Ա., Ուրարտուի հնագիտություն, էջ 98:
3 Նույն տեղում, էջ 98-99:
4 Նույն տեղում, էջ 98-100:
5 Նույն տեղում, էջ 101:

համալիրը կարելի է թվագրել Ք. ա. 7-րդ դ. երկրորդ քառորդով կամ Ռուսա Բ-ի գահակալության ժամանակաշրջանով, այն է՝ Ք. ա. 685-645 թթ. ժամանակամիջոցում:

Չորրորդ համալիրն իր 7 կացարաններով ընկած է 2-րդ և 3-րդ համալիրների միջև[1]: Այստեղ պատերի շարվածքը ավելի քիչ է հղկված, քան նախորդ 3 համալիրների պարագայում, ուստի կարելի է ենթադրել, որ այն ավելի ուշ է կառուցվել՝ Ք. ա. 7-րդ դ. երրորդ քառորդին, երբ քաղաքական և տնտեսական առումով Վանի թագավորությունը շատ թույլ վիճակում էր գտնվում:

Հինգերորդ համալիրը բաղկացած է 12 կացարաններից, որոնք կառուցվել են առաջին և երկրորդ համալիրների արևելյան հատվածին կից: Այս համալիրի շինարարության մեջ գործածվել են նաև անմշակ քարեր, ինչպես նաև օգտագործվել են բնական ժայռեր[2]: Այս ամենը վկայում է համալիրի՝ Ք. ա. 7-րդ դ. երրորդ քառորդին կառուցված լինելու մասին: Պեղումների ընթացքում հայտնաբերվել են խեցեղեն, փայտե, մետաղե իրեր, ինչպես նաև բացվել է դամբարանադաշտ[3]:

Փաստորեն, հատկապես վերջին 40 տարիների ընթացքում Օշականում անցկացված հնագիտական պեղումներն ու ուսումնասիրությունները զգալի նյութ են հավաքել և խմբավորել ուրարտական ժամանակաշրջանի պալատական համալիրների վերաբերյալ:

Այսպիսով, կարելի է հանգել այն եզրակացության, որ Վանի թագավորության ժամանակաշրջանում ժամանակակից Օշական գյուղի տարածքում կառուցված պալատական համալիրները, որոնք թվով հինգն են, կառուցվել են աստիճանաբար՝ Ք. ա. 7-րդ դ. առաջին քառորդից մինչև երրորդ քառորդը, ընդ որում՝ կառուցման ճարտարապետական տեխնիկան ժամանակին համընթաց վատացել և ավելի պարզու-

1 Նույն տեղում:
2 Նույն տեղում, էջ 102:
3 Տես Есаян С. А., Калантарян А. А., Опакан I, էջ 68-81:

նակ բնույթ է ստացել՝ կապված Վանի թագավորությունում աստիճանաբար հասունացող քաղաքական ու տնտեսական ճգնաժամի հետ: Այսպես, եթե առաջին 3 պալատական համալիրներում առկա են ճարտարապետական յուրահատուկ լուծումներ (սյունազարդ սրահ, աշտարակավոր տաճար և այլն), ապա չորրորդ և հինգերորդ համալիրներում օգտագործվել են հաճախ ոչ լավ մշակված քարեր, իսկ ճարտարապետական լուծումներն ավելի համեստ են (ոչ այնքան մեծ բաց սրահ և այլն):

Ստորև ներկայացնում ենք Վանի թագավորության ժամանակաշրջանում Օշականի տարածքում կառուցված պալատական համալիրների թվագրումը ցույց տվող ամբողջական աղյուսակը.

	Պալատական համալիրը	Կառուցման ժամանակը
1	Առաջին	Ք. ա. 7-րդ դ. 1-ին քառորդ
2	Երկրորդ	Ք. ա. 7-րդ դ. 1-ին և 2-րդ քառորդների սահմանագլուխ
3	Երրորդ	Ք. ա. 7-րդ դ. 2-րդ քառորդ
4	Չորրորդ	Ք. ա. 7-րդ դ. 3-րդ քառորդի 1-ին կես
5	Հինգերորդ	Ք. ա. 7-րդ դ. 3-րդ քառորդի 2-րդ կես

Այսպիսով, Օշականի ամրոց-բնակավայրն իր պալատական համալիրներով Վանի թագավորության ժամանակաշրջանի առավել հետաքրքիր և դեռևս նորանոր ուսումնասիրությունների ու հնագիտական աշխատանքների կարիք ունեցող հուշարձաններից է:

Օշականը կարևոր վայր է եղել նաև Երվանդունիների ժամանակաշրջանում, ինչի մասին են վկայում Դիտի կոնդ բլրի վրա հայտնաբերված Ք. ա. 3-րդ դ. անտիկ դամբարանադաշտը, Վանի թագավորության ժամանակաշրջանում կառուցված և մինչև Ք. ա. 5-րդ դ. թվագրվող քառանկյուն ամրոցը:

Արտաշեսյանների ժամանակաշրջանում (Ք. ա. 2-1-ին դդ.) Օշականի վերաբերյալ հնագիտական նյութերի սակավության և գրավոր հիշատակությունների բացակայության պայմաններում, այնուամենայնիվ, կարելի է հանգել այնպիսի եզրակացության, որ Օշականը չի կորցրել նախկինում ունեցած նշանակությունը, քանի որ դամբարանադաշտն ընդհուպ մինչև Ք. հ. 2-րդ դ. շարունակում է ընդլայնվել, ինչը վկայում է բնակավայրի շարունակական գոյության մասին: Միևնույն ժամանակ հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ Արշակունիների ժամանակաշրջանում, Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Արագածոտն գավառի մասը կազմելով, Օշականը մինչև 4-րդ դ. 3-րդ տասնամյակը մտել է արքայական տիրույթների մեջ: Բացառված չէ, որ տեղի ամրոցը կարող էր արքունի տիրույթների պաշտպանական համակարգի բաղկացուցիչ մի մասնիկը հանդիսանալ:

Այսպիսով, Օշականը դեռևս Ք. ա. 3-2-րդ հազարամյակներից կարևոր նշանակություն ունեցող ամրոց-բնակավայր է եղել: Այն կարևոր նշանակություն է ունեցել ոչ միայն Ք. ա. 2-րդ հազարամյակի վերջին, այլև Վանի թագավորության, ինչպես նաև Երվանդունիների, Արտաշեսյանների և Արշակունիների ժամանակաշրջանում:

ԳԼՈՒԽ Գ

Օշականը IV դարում և Ամատունիների իշխանական տոհմը

330 թ. Տրդատ Գ Մեծին (274-276, 288/298-330 թթ.) Մեծ Հայքի թագավորության գահին հաջորդում է նրա որդին՝ Խոսրով Բ Կոտակը (330-338 թթ.): Ինչպես հաղորդում է Պատմահայր Մովսես Խորենացին, տեղեկանալով Տրդատի մահվան մասին, Արևելյան Այսրկովկասում բնակվող քոչվոր մազքութ ցեղերն սպանում են Ս. Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսին, ով իրենց մոտ քրիստոնեության քարոզչությամբ էր զբաղվում[1]: Տրդատի մահվան լուրն ստանալով՝ Մեծ Հայքի Փայտակարան աշխարհում իրեն արքա է հռչակում թագավորին ազգակից Սանատրուկ Արշակունին[2]: Փաստորեն, Խոսրովի՝ գահին բազմելուց հետո Մեծ Հայքի թագավորությունում քաղաքական ցնցումներ են սկսվում: Ինչպես հավաստում է Մովսես Խորենացին, ստեղծված քաղաքական իրադրության պայմաններում Սասանյան Պարսկաստանի արքա Շապուհ Բ-ի (309-379 թթ.) դրդմամբ մազքթաց Սանեսան Արշակունի արքան 20 000-ոց զորքով ներխուժեց Մեծ Հայք[3]: Փավստոս Բուզանդը թեպետ դեպքերի ժամանակագրությունը չի ներկայացնում, սակայն Խոսրովի գահակալումից հետո անդրադառնում է Գրիգորիսի սպանությանը, ինչին հաջորդում է մազքութների և Հյուսիսային Կովկասի լեռնականների հարձակումը Մեծ Հայքի թագավո-

1 **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, էջ 175:

2 Նույն տեղում:

3 Տե՛ս նույն տեղում, էջ 179-180:

ության վրա[1]: Փաստորեն, մազքութների արշավանքը Մեծ Հայքի թագավորություն պետք է տեղի ունեցած լիներ ոչ թե 335-336 թթ., ինչպես նախկինում ներկայացրել է Յ. Մարկվարտը[2] ու նրան հետևել են Հ. Մանանդյանը[3] և այլ անվանի հայագետներ, այլ 331 թ.-ից ոչ ուշ, քանի որ թե՛ Փավստոս Բուզանդը և թե՛ Մովսես Խորենացին հստակորեն նշում են, որ արշավանքը տեղի է ունեցել Տրդատի մահից հետո՝ Խոսրովի գահակալության սկզբնական շրջանում ստեղծված խառնակ ժամանակահատվածում:

Այսպիսով, 331 թ. մազքութներն անցնում են Կուր գետը և ներխուժում Մեծ Հայք: Ըստ Փավստոս Բուզանդի, իսկ հետագայում նաև Մովսես Խորենացու՝ Սանեսանն ավերեց հայկական սահմանային ամրությունները և հարձակվեց մայրաքաղաք Վաղարշապատի վրա: Որոշ ժամանակ անց քաղաքը գրավվում է, և այնտեղ ամրացած հայոց արքա Խոսրով Կոտակն ստիպված Կոգովիտ գավառի Դարյունք (այժմ՝ Բայազետ) բերդն է քաշվում: Վաղարշապատի կորստյան պատճառն այն էր, որ մեր հյուսիսային գունդը ջարդվել և նրա հրամանատար Միհրանն սպանվել էր, իսկ արևելյան, արևմտյան և հարավային գնդերը բավականին հեռու էին գտնվում. հարավայինը Ծոփքում էր, արևելյանը՝ Բագարատ ասպետի ղեկավարությամբ, Հայաստանի արևելյան սահմաններում էր, արևմտյանը՝ Վահան Ամատունի հազարապետի

1 Տե՛ս **Փավստոս Բուզանդ**, Պատմություն Հայոց, էջ 67, 74-75:

2 Յ. Մարկվարտը Սանեսանի արշավանքը 335-336 թթ. թվագրելու համար հիմք է ընդունել Հռոմի Կոստանդիանոս Մեծ կայսեր խորթ եղբոր՝ Դալմաթիոսի որդու՝ Աննիբալիանոսի՝ Կեսարիա, որպես կառավարիչ, ուղարկվելու թվականը՝ ենթադրելով, թե իբր հենց նա է օգնել հայերին՝ ազատագրվելու մազքութներից և հյուսիսկովկասյան լեռնականներից: Նման ենթադրության համար որևէ աղբյուրագիտական հիմք չկա, ուստի մենք առաջարկում ենք հայկական սկզբնաղբյուրների համադրմամբ ստացված 331 թվականը: Ի դեպ, «Օշական» գրքի 1-ին հրատարակության մեջ մենք, հավատարիմ մնալով մեծանուն հայագետների հաշվարկներին, մազքութների արշավանքը թվագրել էինք 335-336 թթ. (Տե՛ս **Մալխասյան Մ.**, Օշական, Էջմիածին, 2007, էջ 11-12):

3 Տե՛ս **Մանանդյան Հ.**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, Երևան, 1957, էջ 144-146:

ղեկավարությամբ, Հայաստանի արևմտյան սահմաններում էր[1]: Շուտով մագքութների վրա հանկարծակի հարձակվեցին մեր արևելյան ու արևմտյան ուղղությունների զորքերը և հետ շպրտեցին դեպի Օշական ու թույլ չտվեցին, որ նրանք, ըստ իրենց սովորության, տարածվելով նետաձգություն կատարեն, այլ քաջարի հեծյալները, նրանց շտապ ու արագապես հետամուտ լինելով, մղեցին քարքարոտ (առապար) դժվար տեղերը[2]: Հակառակորդը ստիպված եղավ ճակատամարտ տալ:

Ահա հենց այստեղ է «Օշական» տեղանվան առաջին հիշատակությունը՝ 331 թ.՝ Փավստոս Բուզանդի կողմից:

Փաստորեն, «Օշական» տեղանվան առաջին հիշատակությունը ոչ թե 336 թ. է, ինչպես ենթադրելի էր Յ. Մարկվարտի և Հ. Մանանդյանի հաշվարկներից, այլ՝ 331 թ.:

Այժմ անդրադառնանք Օշականի ճակատամարտի բուն ընթացքին: Մագքութների նիզակավորների զորագլուխն էր ամբողջովին սպառազինված մի վիթխարի հսկա: Հայոց քաջերն անընդհատ հարձակվում էին նրա վրա, բայց արդյունքի չէին հասնում: Այս ժամանակ հայոց քաջերից Վահան Ամատունին, դառնալով դեպի Վաղարշապատի կաթողիկե եկեղեցին, ասում է. «Օգնի՛ր ինձ, Աստված. դու, որ Դավթի պարսաքարը դիպցրիր խրոխտացող Գողիաթի ճակատին, իմ նիզակս էլ ուղղի՛ր այս հզորի աչքին»[3]: Նրա խնդրանքը զուր չի անցնում. ձիու գավակից խփելով՝ գետին է գլորում հսկային, որից հետո հակառակորդը փախուստի է դիմում, և հայոց բանակի մարտական ոգին բարձրանում է:

Այստեղից Ծոփաց աշխարհը դառնալիս Բագարատն առանց նախանձի հաստատապես վկայում է թագավորին Վահանի քաջագործությունների և այս առաքինական դիպվածի մասին, ուստի թագավորը Վահան Ամատունուն է պարգևում ճակատամարտի տեղը՝ Օշականը, որտեղ Վահանն ինքնակամ դեմ ելավ ու մենամարտեց հսկա թշնամու հետ[1]: Ամենայն հավանականությամբ՝ մինչ այդ Օշականը պետք է որ արքայական կալվածք լիներ:

Հետաքրքիր է այն փաստը, որ Փավստոս Բուզանդը, ժամանակագրական առումով ավելի մոտ լինելով Օշականի ճակատամարտին, չի խոսում գյուղի՝ Ամատունիներին տրվելու փաստի մասին: Անգամ Կորյունը, խոսելով Ս. Մեսրոպ Մաշտոցի՝ Օշականում թաղվելու մասին և նշելով Վահան Ամատունու կողմից Մաշտոցի գերեզմանի վրա եկեղեցու կառուցման փաստը, այնուհանդերձ չի նշում, թե Օշականը Ամատունյաց կալվածք էր[2]: Միայն 5-րդ դ. վերջին Ղազար Փարպեցին վկայում է, որ Օշականը Ամատունիներինն էր, սակայն չի նշում, թե ինչպես է այն բաժին հասել նրանց[3]: Ըստ մեծանուն հայագետ Նիկողայոս Ադոնցի՝ իբրև թե Մովսես Խորենացին իր սեփական կռահումով է Օշականի՝ Ամատունիներին շնորհվելը կապել Օշականի ճակատամարտի հետ[4]: Խոշորագույն հայագետը հավանաբար նկատել է նաև այն փաստը, որ Փավստոս Բուզանդը Վահան Ամատունուն պարզապես թվարկում է հայոց զորքն առաջնորդողների շարքում՝ չխոսելով նրա կատարած որևէ առանձնահատուկ սխրանքի մասին[5]: Չէ՞ որ Ամատունյաց նախարարի սխրանքը տեղ է գտել հենց Մովսես Խորենացու երկում: Սակայն, այնուհանդերձ, մեր կարծիքով Մովսես Խորենացին ոչ թե սեփական կռահումով է գրառել Օշականի՝ Ամատունիներին տրվելու փաստը, այլ արձանագրել է որևէ սկզբնաղբյուրից իրեն հայտնի իրադարձությունը, իսկ մյուս պատմիչները պարզապես հարկ չեն համարել դրան անդրադառնալ, քանի

1 **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, էջ 179:
2 **Փավստոս Բուզանդ,** Պատմություն Հայոց, էջ 76-77:
3 **Մովսես Խորենացի,** Հայոց պատմություն, էջ 179-180:

1 Նույն տեղում:
2 Տե՛ս **Կորյուն,** Վարք Մեսրոպ Մաշտոցի, էջ 59-60:
3 Տե՛ս **Ղազար Փարպեցի,** Հայոց պատմություն և թուղթ Վահան Մամիկոնյանին, էջ 84:
4 **Ադոնց Ն.,** Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 337:
5 Տե՛ս **Փավստոս Բուզանդ,** Պատմություն Հայոց, էջ 77:

որ Օշականի՝ Ամատունիներին պատկանելը նրանց համար սովորական իրականություն էր:

Իսկ ովքե՞ր էին Ամատունիները: Ըստ Մովսես Խորենացու՝ նրանք Հայաստան են տեղափոխվել հայոց Արտաշես թագավորի կառավարման տարիներին, Իրանի Ահմատանի (իմա՝ Համադան) քաղաքից[1]: Մովսես Խորենացու մոտ տեղ գտած այս հիշատակությունը ուսումնասիրողներին շփոթի մեջ է գցել՝ տանելով Արտաշես Ա Բարիի կառավարման տարիները՝ Ք. ա. 189 – մոտ 160 թթ.: Սակայն Արտաշեսի կառավարման ժամանակաշրջանում դժվար է պատկերացնել նմանօրինակ տեղաշարժ Պարթևստանի տարածքից Մեծ Հայք: Այստեղ հավանաբար տեղ է գտել «Տրդատ»-«Արտաշես» շփոթը, որ հաճախ է տեղ գտնում Մովսես Խորենացու մոտ: Չէ՞ որ Տրդատ Ա-ն (52/61/66-76 թթ.), որ Պարթևստանից էր տեղափոխվել Մեծ Հայք, իր հետ պետք է Մեծ Հայքի թագավորություն բերեր նաև պարթևական իշխանազուններ, ուստի Ամատունիները Մեծ Հայք են տեղափոխվել ոչ թե Ք. ա. 2-րդ դ. 1-ին կեսին, այլ՝ Ք. հ. 1-ին դ. 2-րդ կեսին:

Ամատունիները հավանաբար նախ հաստատվել են Արտազ գավառի տարածքում[2]: Շուտով Մեծ Հայքի սահմանապահության մեջ աչքի ընկած Ամատունի իշխանները Արտազ գավառում հավանաբար նախ նշանակվել են՝ որպես կուսակալ, իսկ այնուհետև այն ստացել՝ որպես ժառանգական տիրույթ:

Հարկ է նշել, որ Ամատուններն Արշակունյաց Հայաստանում 4-5-րդ դդ. զբաղեցնում էին «հազարապետություն» գործակալությունը: Ամատունիները սահմանապահության մեջ աչքի էին ընկնում հատկապես Տրդատ Գ Մեծի օրոք: Ամատունի Օտա իշխանը շարունակ արժանանում էր Տրդատի գովեստներին և պարգևներին՝ ի վերջո նշանակվելով հազարապետ: Օտան Ամատունյաց տան առաջին

1 **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, էջ 125:

2 Տե՛ս **Ադոնց Ն.**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 337:

մկրտյալ քրիստոնյան էր, այսինքն՝ Տրդատ Գ-ի հետ միասին մկրտվել էր Արածանիում: Վերոնշյալ Վահան Ամատունին էլ նրա որդին էր:

387 թ. Մեծ Հայքի թագավորությունը բաժանվում է Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության միջև: Պարտավորվելով որոշակի հարկ վճարել Հռոմի Թեոդոսիոս Ա կայսերը՝ Հայոց Խոսրով Գ (384-388, 414-415 թթ.) թագավորը 388 թ. վերամիավորում է Մեծ Հայքի թագավորությունը: Այս քայլը և Խոսրովի կողմից՝ Սահակ Ա Պարթևի հաստատումը հայոց կաթողիկոսական գահին առաջացրին պարսից Շապուհ Գ արքայի զայրույթը: Խոսրովը ձերբակալվեց, իսկ մի խումբ հայ նախարարներ փորձեցին ազատել նրան, սակայն ապարդյուն: Նրանցից շատերը մորթազերծ արվեցին, նրանց հետ՝ արքայի հավատարիմ պաշտպաններից Պարգև Ամատունին: Ամատունիների տոհմը պատժվեց՝ ժամանակավորապես զրկվելով իր ազդեցիկ դիրքից[1]: Վռամշապուհի օրոք (388-414 թթ.) Ամատունիները վերականգնեցին իրենց դիրքերը: 5-րդ դարում Ամատունի ամենանշանավոր դեմքը հազարապետ Վահան Ամատունին էր, որը մասնակցել է Վարդանանց և Վահանանց պատերազմներին: Ըստ Եղիշեի՝ նրա օրոք Օշական ամրոցն ավերվել է Վասակ Սյունու կողմից (450 թ.)[2]: Փաստորեն, Եղիշեի վկայությունից կարելի է եզրակացնել, որ Օշականի ամրոցը դեռևս 5-րդ դ. կեսերին շարունակում էր Մեծ Հայքի կենտրոնական շրջանների ռազմապաշտպանական համակարգի մասը կազմել՝ անհանգստություն պատճառելով պարսկական իշխանություններին:

Այսպիսով, վաղ միջնադարում Օշականի պատմությունը կապված է Ամատունիների իշխանական տան հետ: Այս նախարարական ընտանիքում տեղի ունեցող քաղաքական

1 «Հայկական համառոտ հանրագիտարան», հ. 1, Երևան, 1990, «Ամատունիներ» բառահոդված, էջ 152:

2 **Եղիշե**, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, աշխ. Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1992, էջ 58:

ցնցումներն ու վերելքները, փաստորեն, ուղղակիորեն պետք է անդրադառնային Օշականի վրա, քանի որ այն Ամատունյաց տիրույթների սահմաններում էր:

Ամատունիները Հայաստանի քաղաքական թատերաբեմից հեռացել են 8-րդ դարում, երբ 789 թ. Համամ և Շապուհ Ամատունիները գաղթեցին Բյուզանդիայի սահմանները՝ Խաղտիք: Այդուհանդերձ 10-րդ դարի վերջին Ամատունիները դեռևս որոշակի ազդեցություն ունեին: Դրա մասին են վկայում Թովմա Արծրունու հաղորդած այն տեղեկությունները, որ Շամիրամ բերդում «ապահով նստած» Շերեփի որդի Թադեոս Ակեացին գրեց Ամատունյաց տոհմի «սուրբ եպիսկոպոսին», որը նստում էր Ս. Թադեոս առաքյալի հանգստարանում՝ Արդոզական (Արտազ) գավառում՝ ելք գտնելու վրա հասած հրոսակներից: Նա պատասխանեց քաջալերող խրատով, հորդորեց չերկնչել նահատակությունից և արժանանալ մարտիրոսական պսակի և որ եթե այդ պատերազմում մահանա, որպես հաղթող՝ կժառանգի խոստովանողի անուն, կզորանա Քրիստոսի՝ մեր Աստծո խաչի զորությամբ: Թադեոսը ելավ ապահով տեղից սակավաթիվ զորականներով, որ պահպանում էին Շամիրամ բերդը, հանդիպեց թշնամու՝ Իրանից ներխուժած ավազակախմբերի անհուն բազմությանը Փայտակշտան գյուղում, ջախջախեց հակառակորդին, և այլևս իրանական ասպատակող հրոսակները չկրկնեցին մեր երկրի վրա իրենց հարձակումը[1]: Սրանից հետո Ամատունիներն այլևս երբեք չեն վերականգնել իրենց նախկին ազդեցիկ դիրքը:

1 **Թովմա Արծրունի և Անանուն,** Պատմություն Արծրունյաց տան, աշխ. Վ. Վարդանյանի, Երևան, 1978, էջ 95:

ԳԼՈՒԽ Դ

Գրերի գյուտը և Օշականի սրբացումը

4-րդ դարի ողջ ընթացքում նկատելի էր, որ քրիստոնեության գաղափարները Հայաստանի բոլոր հատվածներում բնակչության բոլոր շերտերին հասու դարձնելու համար հարկավոր է սեփական լեզվով ժամասացություն և հայերեն թարգմանված «Աստվածաշունչ»: Նման թարգմանական գործունեության համար անհրաժեշտ էր սեփական գիր: 387 թ. Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև Մեծ Հայքի թագավորության բաժանումից հետո հայոց գրերի անհրաժեշտությունն էլ ավելի է մեծանում: Եթե գրերը չստեղծվեին, ապա հայ ժողովուրդը ինքնության պահպանման կարևոր պատվարի բացակայության խնդիր կունենար:

Պարսկաստանին ենթակա Արևելահայկական թագավորության թագավորը 388 թ.-ից Վռամշապուհն էր, որը կառավարել է մինչև 414 թ.: Նրա կառավարման առաջին տարիներին Դանիել ասորի եպիսկոպոսն ստեղծեց հայոց որոշ նշանագրեր: Թագավորի և կաթողիկոս Սահակ Ա Պարթևի (կթղ. 387-439 թթ.) հրամանով Վահրիճ Խադունի անունով մի իշխան Դանիելի մերձավոր Հաբել երեցի միջոցով Դանիելյան նշանագրերը հասցրեց Վաղարշապատ: Որոշ ժամանակ այդ նշանագրերով ուսուցում կազմակերպելուց հետո պարզվեց, որ դրանք չէին համապատասխանում հայերենի հնչյունական կազմին, ինչի պատճառով էլ որոնումները շարունակվեցին: Հայոց գրերն ստեղծելը, ի վերջո, վիճակված էր Մեսրոպ Մաշտոցին:

Վռամշապուհը Մեսրոպ Մաշտոցին ուղարկում է Ասորիք (Սիրիա)՝ ասորի հոգևոր և աշխարհիկ իշխանությունների հետ բանակցելու: Մաշտոցն իր մի քանի աշակերտների հետ Ասորիք է գնում, որտեղ էլ ընդունելություն է գտնում հոգևոր և աշխարհիկ իշխանությունների կողմից: Լինում է Ամիդ և Եդեսիա քաղաքներում, խորհրդակցում է տեղի հոգևորականության հետ: Կորյունի վկայությամբ՝ Եդեսիայում Մաշտոցը արարեց հայոց այբուբենը. «...Նա իր սուրբ աջով հայրարար ծնեց նոր և սքանչելի ծնունդներ՝հայերեն լեզվի նշանագրեր...»[1]: Մաշտոցն իր նորագյուտ տառերը դասավորել է՝ օգտվելով հունական այբուբենի հերթականությունից, տառերին տվել է անուններ (այբ, բեն, գիմ...) և սահմանել դրանց թվային արժեքները (Ա՝ 1, Բ՝ 2...): Ապա Մաշտոցը Սամոսատ է գնացել, որտեղ հմուտ հունագետ Հռոփանոսի օգնությամբ գեղագրել է նշանագրերը: Սամոսատում Մաշտոցն ու նրա աշակերտներից երկուսը՝ Հովհան Եկեղեցացին և Հովսեփ Պաղնացին, նոր գրերով «Աստվածաշունչ»-ի առաջին թարգմանությունն են ձեռնարկում՝ սկսելով Սողոմոնի առակներից, որոնց առաջին տողերն են. «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ. իմանալ զբանս հանճարոյ»: Այս նախադասությունը հետագայում Թարգմանչաց շարժման բնաբանն է դարձել և մինչ այժմ էլ շարունակում է մնալ հայ ժողովրդին առաջնորդող կարգախոսերից մեկը[2]:

Գրերն ստեղծելուց հետո Մեսրոպ Մաշտոցը գալիս է Վաղարշապատ, ուր նրան մեծ ցնծությամբ են ընդունում, ընդ որում՝ ցնծող բազմությանն առաջնորդում էին թագավորը և կաթողիկոսը, որոնք դիմավորեցին Մեսրոպ Մաշտոցին Ռահ (իմա՝ Արաքս) գետի ափին[3]:

Սկսվում է նորագյուտ գրերի ուսուցման գործընթացը: Բացվում են դպրոցներ, և կրթվում են Մեսրոպ Մաշտոցի աշակերտների առաջին խմբերը: Այնուհետև սկիզբ է դրվում

1 **Կորյուն,** Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի, էջ 42:
2 Տե՛ս նույն տեղում, էջ 42-43:
3 Տե՛ս նույն տեղում, էջ 44:

Թարգմանչաց շարժմանը: Իր առաջին աշակերտների (Կորյուն, Եզնիկ Կողբացի, Մովսես Խորենացի և այլք) և Սահակ Պարթևի հետ Մաշտոցը հայերեն է թարգմանում «Աստվածաշունչ»-ը:

Մաշտոցը տեղի գիտունների հետ ստեղծում է նաև վրաց և աղվանական գարգարացոց ցեղի «կոկորդաձայն, կոշտ, խժական, կոպիտ լեզվի համար» գրերը[1]:

Ղազար Փարպեցին ասում է, որ Վաղարշապատում հայկական դպրոց բացելուց հետո Մաշտոցը դպրոց բացեց նաև Օշականում[2]: Սա վկայում է այն մասին, որ Օշականն այդ ժամանակ կարևոր նշանակություն է ունեցել:

440 թ. Մեհեկան ամսի 13-ին (իմա՝ փետրվարի 17-ին) Մաշտոցը վախճանվում է: Նրա մարմինը Վաղարշապատից տեղափոխվում է Օշական՝ հազարապետ Վահան Ամատունու տիրույթը՝ Հմայակ Մամիկոնյանի և այլոց ուղեկցությամբ: Վերջինս Վարդան Մամիկոնյանի եղբայրն էր: Ամատունին փետրվարի 20-ին Մաշտոցի գերեզմանի վրա սկսում է եկեղեցի կառուցել՝ շինարարությունն ավարտելով 443 թ.: Այս մասին պատմում է Կորյունը. «Եվ [այնտեղ] ժողովված գլխավոր աշակերտների անուններն այս են. առաջինը՝Հովսեփ, որ և սկզբում գրեցինք. երկրորդինը՝Թադիկ, զգաստ [ու] Վարդապետի հրամանների նկատմամբ շատ զգույշ մարդիկ: Զինվորական կողմից առաջինի անունը՝ Վահան, Ամատունի ցեղից, որ Մեծ Հայաստանի հազարապետն էր, և երկրորդինը՝Հմայակ, Մամիկոնյան տոհմից, սպարապետական, երկյուղած [ու] Վարդապետի հրամանները կատարող մարդիկ:

Եվ մինչդեռ սրբի ձեռները կարկառված էին դեպի երկինք, խաչանման, լուսավոր շողավոր ձևով սքանչելի տեսիլ երևաց այն ապարանքի վրա, ուր վախճանվում էր երանելին. և ամեն մարդ ինքը տեսավ այդ, և ոչ թե ընկերը պատմեց: Եվ նա սրբերին սեր ու միաբանություն ավան-

1 **Մովսես Խորենացի,** Հայոց պատմություն, էջ 227-228:
2 **Ղազար Փարպեցի,** Հայոց պատմություն և թուղթ Վահան Մամիկոնյանին, էջ 84:

դեց. մերձավորներին ու հեռավորներին օրհնությամբ պսակեց և հաճոյական աղոթքը Քրիստոսին հասցնելով՝ հանգավ:

Վահանն ու Հմայակը, աշխարհական բազմության հետ, վերջերին նրան վախճանվածի պատրաստությամբ, սաղմոսներով և օրհնությամբ ու հոգևոր ցնծություններով, վառած կանթեղներով ու բորբոքված ջահերով և բուրող խնկերով, և ամբողջ լուսաճաճանչ աշխարհակով, և այն լուսավոր առաջահանդաց խաչանշանով, բարձրացան Օշական և այնտեղ մարտիրոսարանի մեջ դրին, օրհնավոր հիշատակը կատարեցին, ապա նշանն անհետացավ, և նրանք եկան դարձան յուրաքանչյուրն իր տեղը:

Իսկ երեք տարի անցնելուց հետո Վահան Ամատունուն հաջողվեց քրիստոսասեր ջանքով աքանչելի տաճար կանգնեցնել տաշած, քանդակած քարերով, և տաճարի ներսում շինեց Սրբի գերեզմանը: Նա Քրիստոսի կենդանարար մարմնի և արյան սեղանի համար վայելուչ, գույնզգույն, ոսկով և արծաթով ու թանկագին քարերով պայծառափայլ անոթներ պատրաստեց ի հիշատակ, և մի տեղ հավաքված բոլոր սրբերի հետ Քրիստոսի խաչակրոն վկայի, երանելի Մաշտոցի մարմինը փոխադրեց տաճարի գերեզմանը: Եվ նրա թաղիկ անունով աշակերտին, մի զգաստ ու բարեպաշտ մարդու, եղբայրների հետ, երանության հասած Սրբի համար ապաստավոր կարգեցին ի փառս Աստծու» [1]:

Մեջբերված հատվածից երևում է, որ Օշական գյուղի մի մատուռում առաջ էլ թաղված են եղել մարտիրոսներ կամ վկաներ, այսինքն՝ քրիստոնեական հավատի համար նահատակվածներ[2], ինչը վկայում է Օշականի՝ մինչ այդ էլ քրիստոնեական նվիրական սրբատեղի լինելու փաստի մասին: Հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ Վահան Ամատունին, լինելով հազարապետ, իր չափազանց մեծ հեղինակությամբ կարողացել է վճռական դերակատարություն ունենալ Մեսրոպ Մաշտոցի գերեզմանատեղիի ընտրության հարցում: Չնայած Ղուկաս Ինճիճյանը կասկածի տակ է առել Մաշտոցի՝ Օշականում թաղվելը, սակայն Հրաչյա Աճառյանը, հիմք ընդունելով մի քանի տասնյակ հեղինակների (Կորյուն, Ղազար Փարպեցի, Հովհաննես Դրասխանակերտցի[1], Թովմա Արծրունի, Վարդան Արևելցի[2], Կիրակոս Գանձակեցի և այլք) հաղորդած տեղեկությունները, վերջնականապես հիմնավորում է Մաշտոցի՝ Օշականում թաղվելու փաստը[3]:

Վահան Ամատունու թաղվելու տեղի վերաբերյալ ժողովրդական մի ավանդություն է տարածված, ըստ որի մահվան պահին Վահան Ամատունուն հարցնում են, թե ուր կուզենա թաղվել: Նա պատասխանում է, որ չի ցանկանում Մաշտոցի կողքին թաղվել, քանզի ինքը հիշատակելու արժանի այնքան գործ չի արել, որքան Մաշտոցը, հեռու էլ չի ցանկանում, քանի որ իր ուսուցչին շատ է սիրել, ուստի խնդրում է թաղել իրեն Մաշտոցից 15 քայլ (40 արմնկաչափ կամ 12 մետր) հեռավորության վրա: Եվ իսկապես, հենց այսքան հեռավորության վրա էլ գտնվում է նրա գերեզմանը, որի վրա տապանաքար-հուշարձանակոթող է դրվել հավանաբար 1880 թ. և այնուհետև 20-րդ դ. երկրորդ կեսում նորոգվել:

Մաշտոցի հիշատակը հարգելու համար կաթողիկոս Հովսեփ Ա Հողոցմեցին (Վայոցձորեցի, կթղ. 440-452 թթ.) Կորյունին պատվիրեց գրել Մաշտոցի կենսագրությունը:

Մաշտոցը սրբացվել է և դասվել Հայ եկեղեցու սրբերի կարգը: «Հայսմավուրք»-ում Մաշտոցի անունը 3 տոներով է հիշատակվում, որոնք բոլորն էլ շարժական են.

1. Սրբոյն Իսահակայ Պարթևի հայրապետին մերոյ (տոնվում է հունվարի 24-ից մինչև փետրվարի 28-ը՝ Առաջավորաց պահքի կիրակիից հետո 14-րդ օրը՝ շաբաթ),

1 **Կորյուն,** Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի, էջ 59-60:
2 Նույն տեղում, էջ 142:

1 **Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,** Հայոց պատմություն, աշխ. Գ. Թոսունյանի, Երևան, 1996, էջ 61:
2 **Վարդան Արևելցի,** Տիեզերական պատմություն, աշխ. Վ. Թոսունյանի, Երևան, 2001, էջ 88:
3 Տե՛ս **Աճառյան Հր.,** Հայոց գրերը, հ. 1, Երևան, 1968:

2. Սրբոց Թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրովբայ (տոնվում է հունիսի 1-ից մինչև հուլիսի 16-ը՝ Հոգեգալուստից հետո 33-րդ օրը՝ հինգշաբթի):

3. Սրբոց Թարգմանչաց վարդապետացն մերոց Մեսրովբայ, Եղիշէի, Մովսիսի Քերթողին, Դաւթի Անյաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացւոյն և Ներսիսի Կլայեցւոյն (տոնվում է հոկտեմբերի 3-ից նոյեմբերի 7-ը)[1]: Սա Սրբոց Թարգմանչաց կարևորագույն տոնն է:

Փաստորեն, Գրիգոր Լուսավորիչը քրիստոնեացրեց հայոց ազգը, իսկ Մաշտոցն ամբողջապես ազգայնացրեց քրիստոնեությունը: Թաղվելով Օշականում՝ Ս. Մեսրոպ Մաշտոցը սրբագործեց և սրբազան ուխտատեղի դարձրեց այս բնակավայրը:

1 **Շ. արք. Գալուստյան,** Հայազգի սրբեր, Երևան, 1997, էջ 75-83:

ԳԼՈՒԽ Ե

Միջնադարյան Օշականը

6-9-րդ դարերում Օշականի վերաբերյալ գրավոր հիշատակությունները գրեթե բացակայում են: Կարելի է առանձնացնել միայն 10-րդ դարի պատմիչ Ուխտանես եպիսկոպոսի հիշատակությունն այն մասին, որ հայոց Աբրահամ Ա Աղբաթանեցի (կթղ. 607-615 թթ.) կաթողիկոսի գահակալության սկզբում Հայոց սրբազան դավանանքին հավատարիմ լինելու հավաստմամբ հայրապետին ներկայացած հոգևորականների թվում էր Օշականի «վանացերէց» (իմա՝ վանահայր) Խոսրովը[1]: Այս փաստը վկայում է այն մասին, որ առնվազն Աբրահամ Ա-ի գահակալության շրջանում Օշականում քաղկեդոնականությունը ոչ միայն տիրապետող չի եղել, այլև տարածում չի ունեցել:

Արաբական արշավանքների և տիրապետության շրջանում Օշականի վերաբերյալ հիշատակությունները դադարում են:

10-րդ դ. 2-րդ կեսից մինչև 11-րդ դ. կեսերը Օշականը պատկանել է Պահլավունիներին, ինչի մասին է վկայում այն հիշատակությունը, որ սպարապետ Վահրամ Պահլավունին նորակերտ Մարմաշենի վանքին է նվիրել 3 ջրաղաց և այգիներ Օշականում[2]: Ուշագրավ է այն փաստը, որ Մարմաշենի շինարարության ավարտի կապակցությամբ 1029 թ. Վահրամ Պահլավունու թողած արձանագրության մեջ Օշա-

1 **Ուխտանէս եպիսկոպոս,** Հայոց պատմութիւն, աշխ. Վ. Առաքելեանի, Երևան, 2006, էջ 154-155:

2 «Հայ ժողովրդի պատմություն», ՀԽՍՀ ԳԱ հրատ., հ. 3, Երևան, 1976, էջ 171:

կանը նշվում է՝ որպես «գանձագին», այսինքն՝ գնված կալվածք[1]:

Ուշագրավ է հատկապես Օշականի 13-րդ դարի պատմությունը: Հայտնի է, որ 13-րդ դարից սկսած միջնադարյան հայկական գյուղերի գյուղապետերին հաճախ «ռայիս» (արաբերեն՝ «գլխավոր», «պետ»[2]) էին կոչում: Նույնն էր նաև Օշականում, որի մասին է վկայում 1210 թ. Բագնայրի արձանագրությունը, որտեղ նշվում է, որ այդ պահին Օշականի ռայիսը Պարսիմոն էր՝ Հասանի որդին[3]: Նրա ղեկավարման շրջանում Օշականը ծաղկում է ապրել:

Հայտնի է, որ 13-րդ դարում հայ մեծահարուստ Տիգրան Հոնենցը բոլոր հարուստ գյուղերում այգիներ էր գնում: Նա մեկ այգի է գնել նաև Օշականում[4]: Հոնենցի պես Հյուսիսարևելյան Հայաստանի ամենահարուստ մարդկանցից մեկը Զաքարյանների իշխանության ներքո գործող անեցի Ավետենց Սահմադինն էր, որի տիրույթները սահմանափակվում էին Անի քաղաքի կեսով, Երևան քաղաքով, Մրեն գյուղաքաղաքով, Օշական և Արջոառիճ գյուղերով[5]: Առաջին երեքը և վերջինը Զաքարյանների և Հոնենցի կողմից ծաղկման հասած բնակավայրեր էին, իսկ եթե Օշականն էլ է դրանց հետ նշվում, ապա դա այն մասին է վկայում, որ Օշականը նույնպես ծաղկուն գյուղ էր:

1273 թ. Սահմադինը Օշականում և Արջոառիճում արձանագրություններ է թողել, որոնց միջոցով իմանում ենք, որ նա այդ տարի վերացրել է Արջոառիճի, Օշականի, Մրենի խաղողի այգիների՝ մոնղոլ-թաթարներին տրվող «խալա» կոչվող տուրքը, ինչը վկայում է Սահմադինի՝ չափազանց հարուստ և ազդեցիկ լինելու մասին. «...Ի խալալ և յերրորդ հարկէ, որ բնական ազատ էր»[1]:

1277 թ. մասնակիորեն վերանորոգվել է Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին[2]:

1286 թ. Սահմադինը Օշականում կրկին արձանագրություն է թողել, որում ասվում է, որ Օշականի՝ իր կողմից նշանակված ռայիս Ստեփանոս ձեռնավորը և Օշականի քեթոբար (իմա՝ բերդապետ) Վահրամը վերացրել են Օշականի քահանաների վճարելիք՝ այգու, բամբակի և ժամհարի հարկերը, որոնք նույնպես տրվում էին մոնղոլական իշխանություններին. «Ի թուին եօթն հարիւր երեսուն եւ հնգին՝ ողորմութեամբն Աստուծոյ եւ հրամանաւ Պարոն Սահմադինին, եւ՝ Ստեփաննոս ձեռնաւորս, եւ Վարհամ քեթոբարս... թողաք զՅօշականու քահանայից զինչ որ հարկ կայր այգոյ, բամբակի... եւ ժամհարին. յիշատակ հոգւոց մերոց եւ ամուսնաց: Եւ սոքա խոստացան ի տարուոջն Գ ժամ ի յաւոր Ծնունդեանն. Բ Ստեփաննոսի. Ա Վարհամայ. ով որ յետ ժամանակաց խափանել ջանայ ՅԺԸ հայրապետացն նզոված է. եւ մեր մեղաց պարտական է»[3]: Այս արձանագրությունը վկայում է այն մասին, որ 13-րդ դարում Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցին դեռևս կանգուն է եղել: 1288 թ. Սահմադինը օշականյան հերթական արձանագրությունն է թողնում, որում ասվում է, թե այդ թվին նա վերացրել է Օշականի հացի և դարմանի շարիաթը (իմա՝ հողատիրոջը վճարվող տուրքը). «Ի թուին ՉԼԷ. Շնորհիւ բարերարին Աստուծոյ, յամի թագաւորութեան ասպուածասէր արքայ Արղուն ղանին,

1 Տե՛ս **Ալիշան Ղ.**, Շիրակ, աշխ. Ա. Իսոյանի, Պ. Հովհաննիսյանի և Դ. Սարգսյանի, Երևան, 2010, էջ 148:

2 **Մալխասեանց Ս.**, Հայերէն բացատրական բառարան, հ. 4, Երևան, 1945, էջ 157:

3 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 3, էջ 553:

4 Նույն տեղում, էջ 586-587:

5 Նույն տեղում, էջ 587-589:

1 **Բարխուդարյան Ս.**, Մի քանի դիտողություններ Երևանի Կաթողիկե եկեղեցու արձանագրությունների վերաբերյալ, «Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ. հասարակական գիտություններ», Երևան, 1947, թ. 5, էջ 71:

2 **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, Երևան, 2001, էջ 482:

3 **Ալիշան Ղ.**, Այրարատ, էջ 189:

եւ՝ Պարոն Սահմատինս՝ որդի Պարոն Աւետեացն՝ թողի զՅաւշականոյ գիւղի եւ զդարմանի զշարիատն, ըզվերի եւ զեւերքի զամենն հանդի, վասն փրկութեան հոգոյ իմոյ եւ ծնողաց իմոց, եւ յարեւշատութիւն որդոց իմոց, Ամիրբէկին եւ այլոցն: Արդ յետ ժամանակաց եթէ ի թագաւորաց կամ յիշխանաց զընծայս մեր խափանել ջանայ, ՅԺԸ հայրապետացն նզովեալ է, վարձ զՈւթայի զասպուածավաճառի եւ զԿայենին առցէ, եւ մեր մեղաց պարտական է»[1]:

1288 թ. մեկ այլ արձանագրությունում ասվում է. «Ի թուականին ՉԼԷ, յառաջնորդութեան տէր Համազասպայ եւ ի պարոնութեանն Սահմադինին եւ իւր որդոցն Ամիրբէկին եւ Հազարբէկին, եւ՝ Գեշմարդս էի ամիրայ, եւ Հաւիկս ձեռնաւոր, թողաք զՍուրբ Կարապետին այգեացն, զՅաւշականու, զՄիրինու, զձեռնաւորին զիարկն զինչ որ կայր, վասն փրկութեան հոգոց մերոց եւ յարեւշատութեան Պարոնացն: Արդ որ յետ ժամանակաց զընծայս մեր խափանել ջանայ, ՅԺԸ հայրապետացն նզովեալ է, եւ վարձ զՅուդայի առցէ, եւ հող աւրհնութեան զնա մի ծածկեսցէ. Կապարիչք գրոյս աւրհնին յԱստուծոյ. ամէն»[2]:

1295 թ. օշականյան մի արձանագրությունում էլ ասվում է, որ նույն թվականին Սահմադինի թոռ պարոն Բեսութան վերացրել է իր տիրույթ Օշականի և նրա վանքերի հարկերից մեկը. «Ի թուին ՉԽԴ. ի թագաւորութեան ասպուածասէր արքայ Քեաղաթու դանին, եւ ի հայրապետութեան Տէր Համազասպայ, եւ՝ Բէսութայս, որդի Պարոն Ամիրբեկին, որդոյ պարոն Սահմատինին, թողաք զՅոշականու գոէսարայ զիարկն, գեղիս եւ գվանորահց, վասն արեւշատութեան հաւր իմոյ, եւ ինձ՝ Բէսութայիս, եւ ի փրկութիւն հոգոյ Ամիրի: Արդ (որ) յետ ժամանակաց ի թագաւորաց կամ յիշխանաց զընծայս մեր խափանել ջանայ, ՅԺԸ հայրապետացն նզովեալ է, եւ վարձ զՈւդայի եւ զԿայենին առցէ, եւ ի լոյս փրկչական մի՛ հայեսցի, եւ մեր մեղացն պարտական է. Կապարիչք գրոյս աւրհնին յԱստուծոյ. ամէն»[1]:

Ղևոնդ Ալիշանը Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցի «Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ դաւառացն Այրարատայ» հրատարակության երկրորդ հատորից մեջ է բերում մի անթվական արձանագրություն. «Ես՝ իշխան Յոհան () Ամատունի, յազգէն Հայոց, եղի սահման զաւառիս իմոյ Յաւշականայ, հասանի մինչ ի բլուրն Էջմիածնի, եւ անտի վայր մինչ ի Քասախ. () հիւսիսոյ կուսէ գետն Փարպու մինչ ի Քասպկն () համակ պողոտայն. եւ անտի վեր Կարբու դարերն. յարեւելից կուսէ ճանապարհն Եղէվարդայ, ասպի մինչ յէջմիածին: Ով որ այս ցանկս պատառէ, սեւերես լինի առաջի Աստուծոյ. ամէն»[2]: Այս արձանագրության վերաբերյալ ենթադրություններ կատարելը դժվար է, քանի որ Շահխաթունյանցի այս աշխատությունը տպագրվել է 1842 թ., այսինքն՝ մինչև եկեղեցու ամբողջական նորոգումը: Հ. Շահխաթունյանցը արձանագրության տեղը նշում է հարավային ավանդատան պատը, ինչը ներկայումս հնարավոր չէ ճշտել:

1431 թ. Զուխուր-Սաադի (իմա՝ Արարատյան) կարակոյունլու թուրքմենական կուսակալության կուսակալ Ռուստամ Բեյքենենց Օրբելյանը առանց ղեկավարի մնացած Օշականը՝ Վաղարշապատի և 5 խոշոր գյուղերի (Բաթռինջ, Նորագավիթ, Աղավնատուն, Թեղենիս-Քիրաջլի, Մուղնի) հետ միասին, վաճառքի անվան տակ նվիրել է Ս. Էջմիածնի վանքին՝ հզորացնելով այն տնտեսապես և նպաստելով կաթողիկոսական աթոռանիստի տեղափոխմանը[3]:

1 Նույն տեղում, էջ 189-190:
2 Նույն տեղում, էջ 190:

1 Նույն տեղում:
2 Նույն տեղում:
3 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, Երևան, 1972, էջ 39:

Օշականի մասին միջնադարյան վերջին տեղեկությունները Առաքել Դավրիժեցու գրչին են պատկանում, այսինքն՝ 17-րդ դարից են: Նա թվարկում և նկարագրում է գյուղի՝ դարասկզբի պարսկա-թուրքական հալածանքները: Նրա վկայությամբ՝ Աբդուռահման Մուսալիմ անունով մեկի գլխավորությամբ ջալալիները Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքը թալանելուց հետո մտան Օշական և որոշեցին թալանել գյուղի ունևորներից մեկի տունը: Նրանք մտան տուն ու տանտիրոջը տանջեցին, որպեսզի նա իր պահուստի տեղն ասի: Այս տեսնելով՝ գյուղի բնակչության մի մասը, վերցնելով ունեցած-չունեցածը, գնաց Գեղարքունյաց գավառ[1]: Առաքել Դավրիժեցին այս կերպ ցանկանում է ցույց տալ, թե թուրք-պարսկական պատերազմների և ջալալիների ասպատակությունների հետևանքով 1606-1609 թթ. ինչպիսի սով և դժնդակ պայմաններ էին առաջացել:

1631 թ. վրաց Թեյմուրազ թագավորը ապստամբություն բարձրացրեց Սեֆյան Պարսկաստանի դեմ: 1632 թ. պարսիկները որոշեցին արյան մեջ խեղդել ապստամբությունը: Օգտվելով այն հանգամանքից, որ պարսիկներն զբաղված էին այդ ապստամբությունը ճնշելով՝ թուրքական որոշ զորախմբեր ներխուժեցին Արարատյան դաշտ: Օշականի և մի քանի այլ գյուղերի (Եղվարդ, Քանաքեռ, Նորագավիթ, Վաղարշապատ և այլն) բնակիչներ կանգնեցին նրանց ճանապարհին և փախուստի մատնեցին: Նրանք նաև Օշական մտան, որտեղ ժողովուրդը հերոսական դիմադրությամբ փախուստի մատնեց նրանց[2]:

1639 թ. Կասրե-Շիրինի պայմանագրով թուրք-պարսկական պատերազմներն ավարտվեցին, և Օշականը շարունակեց մնալ Հայաստանի՝ Սեֆյան Պարսկաստանի կողմից նվաճված մասում:

1 **Առաքել Դավրիժեցի,** Պատմություն, էջ 73-74:
2 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, էջ 106:

Առաքել Դավրիժեցու հաղորդած հաջորդ տեղեկությունը Օշականի մասին 1639-1645 թթ. Փիլիպպոս Աղբակեցի կաթողիկոսի (կթղ. 1633-1655 թթ.) օշականյան շինարարությունների վերաբերյալ է. «...Հոյակապ, լայնանիստ, բարձրաբերձ... այս տաճար-հանգստարանի ողջ տանիքը վաղ ժամանակներից փլվել, նստել էր, միայն Ավագ խորանն էր մնացել ծածուկ»[1]: Հարկ է նշել այն փաստը, որ թուրք-պարսկական պատերազմների ընթացքում Օշականից գանձվող հարկերը չեն տրվել Մայր Աթոռին, և միայն Փիլիպպոս Աղբակեցու գահակալության շրջանում է վերականգնվել Ս. Էջմիածնին տրվող մուլքը[2]: Եկեղեցու վերակառուցումն էլ տեղի ժողովրդին հայրենի հավատին ամուր պահելու, ազգային դիմագիծը պահելու և մեծն Մաշտոցի գերեզմանի ապահովության համար էր: Այս կերպ, փաստորեն, Օշականը հոգևոր վերաշինության փորձ էր կատարում շուրջ մեկ ու կես հարյուրամյակ տևած թուրք-պարսկական պատերազմներից հետո:

Այսպիսով, Օշականը մուտք գործեց միջնադար՝ որպես Հայաստանի կարևոր հոգևոր, քաղաքական և կրթական կենտրոններից մեկը, սակայն դուրս եկավ միջնադարից՝ մի կերպ պահպանելով գոյության իր իրավունքը:

1 **Առաքել Դավրիժեցի,** Պատմություն, էջ 277:
2 **Սիմեոն կաթողիկոս Երևանցի,** Ջամբռ, էջ 152:

ԳԼՈՒԽ Զ

Օշականը XVIII-XIX դարերում

Սեֆյան Պարսկաստանի կազմում Օշականը գտնվում էր նախ Զուխուր-Սաադի բեկլարբեկության, իսկ 18-րդ դ. կեսերից՝ Երևանի խանության Կարբիբասարի մահալի կազմում:

Նոր դարերում Օշականի առաջին հիշատակությունը փոքր-ինչ զավեշտալի մի ողբերգության հետ է կապված. 1725 թ. հոկտեմբերի 10-ին Օշականում Աստվածատուր Համադանցի (կթղ. 1715-1725 թթ.) կաթողիկոսը Լուսնի խավարումը դիտելիս ընկնում է գմբեթի բարձունքից և 4 ժամ անց վախճանվում[1]:

Հաջորդ հիշատակությունը տեղ է գտել Աբրահամ Գ Կրետացու (կթղ. 1734-1737 թթ.) մոտ. նա 1734 թ. Մուղնի այցելելիս չի շրջանցել նաև Օշականը[2]:

Նադիր խանը 1735 թ. Ս. Էջմիածնին պատկանող գյուղերը, այդ թվում՝ Օշականը, ազատել է Երևանի խանին վճարվող հարկերից՝ նպատակ ունենալով այդ կերպ ամրապնդելու իր հեղինակությունը հայ բնակչության շրջանում[3]:

1740-ական թթ. սկզբներին սուր պայքար է ընդունում Ս. Էջմիածնի վանքի և Պարսկաստանի տարածքից Հարավարևելյան Այսրկովկաս ներխուժած մուղանլու կոչվող թյուրքական ցեղի՝ Արարատյան դաշտ ներխուժած առանձին խմբերի միջև պայքարը Օշականի հողերի համար[4]: Նադիր

1 **Մ. արք. Օրմանեան,** Ազգապատում, հ. 2, Ս. Էջմիածին, 2001, էջ 3286:

2 Տե՛ս **Աբրահամ Կրետացի,** Պատմութիւն անցիցն իւրոց և Նապտր-շահին Պարսից, բնական բնագիր, աշխ. Ն. Ղորղանյանի, Երևան, 1973:

3 Տե՛ս **Սիմեոն կաթողիկոս Երևանցի,** Ջամբռ, էջ 163-164: «Հայոց պատմություն», ՀՀ ԳԱԱ հրատ., հ. 3, գ. Ա, Երևան, 2010, էջ 93:

4 **Մալխասյան Մ.,** Սիմեոն Երևանցու «Ջամբռ» երկի աղբյուրագիտական

շահի (1736-1744 թթ.) մահվանից 4 տարի անց՝ 1748 թ.[1], մուղանլու ցեղն ընդհարման ժամանակ սպանում է Հակոբ եպիսկոպոս Խամսեցուն, ով ուղարկվել էր Մայր Աթոռից, և գյուղն ամբողջությամբ անցնում է քոչվորակենցաղ ցեղի ձեռքը: Գյուղի հայ բնակչության համար սկսում է գյուղատնտեսական բնականոն աշխատանքի խաթարման 20-ամյա մի ժամանակահատված, երբ վարելահողերը վերածվում էին քոչվոր անասնապահների արոտավայրերի[2]: Դա բավական չէր, 1760 թ. լեզգիները թալանչիական նկատառումներով ներխուժում են Արարատյան դաշտ, տիրում Օշականին և այնտեղից հարձակումներ գործում Վաղարշապատի վրա[3]: Զմռան մոտենալուն պես նրանք վերստին հեռանում են:

Սիմեոն Ա Երևանցի (կթղ. 1763-1780 թթ.) կաթողիկոսը 1768 թ. վճռական գործողությունների է անցնում մուղանլու ցեղի դեմ, ազատում Օշականը նրանցից ու տեղաբնիկ հայ բնակչության հեռացած զանվածներին իրենց հայրենի գյուղը վերադարձնում, և Օշականը վերստին Ս. Էջմիածնի վանքին պատկանող գյուղ է դառնում[4]:

Ուշադրության է արժանի այն փաստը, որ Սիմեոն Երևանցու ատենադպիրը՝ Երեմիան, օշականցի է եղել: Երեմիա Օշականցու գրչին է պատկանում 1765 թ. գրառված մի փաստաթուղթ[5], որի շնորհիվ հնարավոր է պարզել տվյալ

արժեքը Հայաստանի պատմական էթնոժողովրդագրության համար, «ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու», հ. 1, Երևան, 2012, էջ 166:

1 Այս թվին ստացել ենք Սիմեոն Երևանցու և Մ. արք. Օրմանյանի հաղորդած տեղեկությունների համադրմամբ: Մ. Օրմանյանը մուղանցիների օկուպացիայի ժամանակահատվածը 20 տարի է նշում, իսկ Սիմեոն Երևանցին վոնդում է նրանց 1768 թ., ուստի՝ 1768-20=1748:

2 **Մ. արք. Օրմանեան,** Ազգապատում, հ. 2, էջ 3525:

3 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, էջ 196:

4 Տե՛ս **Սիմեոն կաթողիկոս Երևանցի,** Ջամբռ, էջ 51:

5 Տե՛ս **Երեմիա Օշականցի,** Աստուածակառոյց մեծի Աթոռոյս սրբոյ Էջմիածնի համայն նուիրակաց յաղագս նուիրակական արդեանց շրջագայելի քաղաքն հանդերձ գիւղաքաղաքօք նոցին, ըստ յատուկ յատուկ անուանց մի ըստ միոջէ, ստորագրին, «Դիւան հայոց պատմութեան», գիրք Գ, Թիֆլիս, 1894, էջ 797-806:

ժամանակաշրջանում հայաբնակ բնակավայրերի գրեթե ամբողջական պատկերը:

Քանի որ խոսեցինք օշականցի ատենադպիրի մասին, հարկ ենք համարում նշել այն հանգամանքը, որ Օշականը, զարգացած և ուշ միջնադարում ու նոր ժամանակներում լինելով գյուղատնտեսական աշխատանքների կենտրոն, կորցրել է կրթական հզոր կենտրոնի իր նախկին դերը՝ այդպես էլ չստեղծելով գրչության այնպիսի հզոր դպրոց, ինչպիսին կար, օրինակ՝ իրենից ոչ շատ հեռու գտնվող Հովհաննավանքում: Պատահական չէ, որ օշականյան գրչությունից մեզ հասած եզակի նմուշներից ամենաարժեքավոր աշխատանքը 1414 թ. այստեղ օրինակված «Աստվածաշունչ» է[1]:

Այսպիսով, չնայած քաղաքական անբարենպաստ անցուդարձերին, Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսի ջանքերով Օշականը 18-րդ դ. 60-ական թթ. 2-րդ կեսից վերստին սկսել է ապրել իր բնականոն կյանքով:

* * *

1801 թ. Արևելավրացական (Քարթլ-Կախեթի) թագավորությունը միացվեց Ռուսական կայսրությանը: Սա կայսրության առաջին լուրջ տարածքային ձեռքբերումն էր Այսրկովկասում: Արևելավրացական թագավորության կազմում Ռուսաստանին անցան նաև Լոռի-Փամբակը, Ղազախը և Շամշադինը: Փաստորեն, սկսվեց Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու գործընթացը: Աստիճանաբար ռուս-պարսկական հարաբերություններն այնքան լարվեցին, որ 1804 թ. սկսվեց ռուս-պարսկական առաջին պատերազմը: Նախ հունիսին ռուսները գրավեցին Գանձակի խանությունը: 1804-1807 թթ. Օշականից և շրջակա մի քանի բնակավայրերից (Վաղարշապատ, Աշտարակ) մեծաթիվ հայեր ռուսական սահմանից Երևան բացված ճանապարհով գնացին Գանձակի նախկին խանության Փամբակաձոր գյուղը՝ այդ կերպ փախչելով պարսկական տիրապետությունից[1]: 1813 թ. հոկտեմբերի 12-ին կնքված Գյուլիստանի պայմանագրով արևելահայկական տարածքներից Ռուսաստանին անցան Ղարաբաղը, Զանգեզուրը, Շիրակը, սակայն Արևելյան Հայաստանի մեծ մասը, այդ թվում՝ Օշականը, մնաց Պարսկաստանի տիրապետության տակ:

Գյուլիստանի պայմանագրի կնքումից հետո երկու հարևան պետությունների միջև հարաբերությունները խիստ լարված մնացին, և 1826 թ. սկսվեց ռուս-պարսկական երկրորդ և վերջին պատերազմը: 1826 թ. հուլիսին պարսկական թագաժառանգ Աբաս-Միրզան 60 000-ոց բանակով ներխուժեց Ռուսական կայսրության սահմանները: Ռուսները մինչև աշուն անհաջողություններ կրեցին, այնուհետև սկսվեց կորցրած տարածքների ետգրավումը: Նշանակալի էր 1826 թ. սեպտեմբերի 3-ին հայազգի գեներալ Վալերիան Մադաթովի գլխավորությամբ ռուսական 2 000-ոց զորամասի հաղթանակը 10 000-ոց պարսկական զորքի նկատմամբ: Էլ ավելի կարևոր նշանակություն ունեցավ սեպտեմբերի 13-ին Գանձակի մոտ գեներալ Իվան Պասկևիչի գլխավորած 8 000-ոց ռուսական զորքի հաղթանակը Աբաս-Միրզայի 35 000-ոց զորքի նկատմամբ: Հոկտեմբերին ռուսները ետ են մղում պարսիկներին ռուսական սահմանից: Միմյանց էին հաջորդում ռուսական բանակի նորանոր հաջողությունները: Սակայն Աբաս-Միրզան չհաշտվեց այս ամենի հետ: 1827 թ. օգոստոսի 6-ին նա գրավում է Աշտարակը, իսկ օգոստոսի 15-ին՝ 30 000-ոց զորքով գրոհում Էջմիածնի վրա: Շոգից պատսպարվելու և զորքին հանգիստ տալու նպատակով գեներալ Աֆանասի Կրասովսկին զորքով հաստատվել էր Արագածի լանջերին: Էջմիածնի պաշարման մասին լուրն առնելով՝ օգոստոսի 16-ին Ա. Կրասովսկին Ապարանի ռու-

1 Տե՛ս **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, էջ 482:

1 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 5, Երևան, 1974, էջ 18:

սական ճամբարից 12 թնդանոթ և շուրջ 3 000-ոց զորք է վերցնում, այդ թվում՝ 100 հայ ու 40 վրացի աշխարհազորային, և շտապում փրկել Էջմիածնի կայազորը, վանականությանն ու ողջ քրիստոնյա ազգաբնակչությանը: Օգոստոսի 17-ին Օշականից 2 վերստ (2,14 կմ) հեռավորության վրա հանդիպում են ռուսական և պարսկական զորքերը: Աբաս-Միրզան փակում է Էջմիածին տանող ճանապարհը և ցանկանում է, այդ 3 000-ին ոչնչացնելով, բացել Թիֆլիս տանող ճանապարհը: Ապարանից Օշական առանց հանգստի գնացած ռուս զինվորներն ու աշխարհազորայինները հոգնած և քաղցած էին: Աբաս-Միրզան դասավորում է իր հրանոթները Դիտի կոնդի վրա: Նա հաշվի էր առել, որ ռուսները հոգնած և քաղցած էին, ուստի թնդանոթներն ուղղում է դեպի գետը, ուր կարող էին նետվել ծարավ ռուս զինվորները: Ծուղակն ընկած ռուսներին մյուս կողմից պետք է հարվածեին Ջաֆար խանի փորձված մարտիկները[1]: Այսպիսին էր պարսկական հրամանատարության ծրագիրը:

Օշականի ճակատամարտին Էջմիածնից տագնապով հետևող Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցին գրել է. «Ամսի 17-ին, երբ լուսացավ... մոտ ժամի 8-ին երևեցավ ռուսական բանակը Աշտարակի դիմացը: Իսկ պարսից զորքը պատրաստ վիճակի մեջ դրվեց Օշականի գետակի եզերքին, և երբ ռուսաց զորքը մոտեցավ նրանց, սկսեցին նախ թնդանոթ արձակել, և ապա չափազանց սաստիկացավ ահեղատեսիլ պատերազմը՝ սկսած ժամը ութից մինչև ժամը 5-ը, կեսօրից հետո»[2]:

Պարսկական բանակը բաղկացած էր 9 000 հետևակից և 21 000 հեծյալից, իսկ զինտեխնիկան՝ 24 թնդանոթից, որոնցից 3-ը բավականին մեծ էին: Պարսիկների կողմից 700 անգամից ոչ պակաս հրետանային հարված հասցվեց, իսկ ռուսների կողմից՝ մի քանի անգամ ավելի քիչ[3]:

1 **Շահազիզ Ե.**, Աշտարակի պատմությունը, Երևան, 1987, էջ 136-137:
2 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 5, էջ 152:
3 Նույն տեղում:

Կանգ չառնելով խոշոր կորուստների առաջ՝ Աբաս-Միրզան աստիճանաբար ռուսական զորագունդն օղակելու վտանգ է ստեղծում: Այդ ծանր պահին հանկարծ պարսկական զորքերի գլխին որոտում է հրանոթի հզոր համազարկը: Պարսիկներն սկսում են խուճապահար նահանջել՝ կարծելով, թե Կրասովսկու զորագնդին օգնության են հասել օժանդակ ուժեր՝ ծանր հրետանիով: Սակայն ռուսական զորքին ոչ մի ուժ օգնության չէր եկել: Այդ պարսկական բանակ զորակոչված նորքեցի նշանավոր թնդանոթաձիգ Հակոբ Հարությունյանն էր, որ տեսնելով ռուսական զորագնդի աղետալի վիճակը, իր կյանքը վտանգելով, անգլիական նոր ծանր թնդանոթն ուղղում է պարսկական զորաշարքերի դեմ: Մինչև թշնամին ուշքի կգար և կհասկանար կատարվածը, Կրասովսկու զորագունդը ճեղքում է հակառակորդի շղթան և ժամը 17-ին մտնում Էջմիածին: Հ. Հարությունյանը փորձում է փախչել և միանալ ռուսական զորքին, սակայն Էջմիածնի մատույցներում բռնվում է ու ենթարկվում հրեշավոր խոշտանգումների. փորվում են նրա աչքերը, կտրվում քիթը, շրթունքները, ականջներն ու կրունկները: Որոշ ժամանակ անց Հ. Հարությունյանը, ուշքի գալով, մի կերպ հասնում է Էջմիածին, որտեղ սկսում են բուժել նրա վերքերը: Հ. Հարությունյանին իր ցուցաբերած սխրագործության համար ռուսական կառավարությունը սահմանեց տարեկան 100 ռուբլի ցմահ կենսաթոշակ[1]:

Օշականի ճակատամարտում պարսիկները կորցրին ավելի քան 3 000 զինվոր, իսկ վիրավոր՝ շատ ավելի, ռուսները՝ 1 131 սպանված և մոտ 200 անհետ կորած[2]: Հայերը, ի հավերժացումն Օշականի ճակատամարտում զոհված ավելի քան 1 000 ռուս զինվորների հիշատակի, Էջմիածնից 4 կմ հեռավորության վրա 1833 թ. մայիսի 9-ին մեծ հանդիսավորությամբ

1 Նույն տեղում:
2 «Հայկական համառոտ հանրագիտարան», հ. 4, «Օշականի ճակատամարտ» բառահոդված, էջ 923:

հիմք դրեցին մի հուշարձանի (ճարտարապետ՝ Կոմպանեյսկի), որի կառուցումն ավարտվեց 1834 թ.:

Չնայած Օշականի ճակատամարտում ռուսները բազմաթիվ զոհեր տվեցին, սակայն ձախողեցին Աբաս-Միրզայի՝ Էջմիածինը գրավելու և Թիֆլիս շարժվելու պլանը ու մեծապես նպաստեցին զորքի մարտական ոգու բարձրացմանն ու հետագա հաջողություններին: Օշականի հայ ազգաբնակչությունը նույնպես մասնակցում էր ճակատամարտին, սակայն գլխավորապես տնտեսական առումով, այսինքն՝ ապահովելով պարենավորումը: Ռուսական տիրապետության տակ անցնելուց հետո՝ 1827 թ. սեպտեմբերի վերջին, օշականցիները Քանաքեռի, Էջմիածնի և Աշտարակի գյուղացիների հետ միասին աշխարհազորային գնդեր կազմեցին և մեծաքանակ պարենով շարժվեցին դեպի Երևան, որն արդեն մի քանի օր շրջապատված էր ռուս զինվորներով: Սրան նպաստեց ռուսներին տրամադրվող օգնությունն ավելացնելու մասին Ներսես Աշտարակեցու կոչը[1]: Հայերի համակրությունն անկասկած ռուսների կողմն էր, որի մասին են վկայում նաև իրենք՝ ռուսները: Անհրաժեշտ է հատկապես նշել Օշականի ճակատամարտի ակտիվ մասնակից, դեկաբրիստ Ե. Լաչինովի խոսքերը. «Եվ զարմանալի չէ, որ խաղաղ բնակիչներն իրենց մեր պաշտպանությանն էին հանձնում. մենք տեսանք նրանց լիակատար վստահությունը ռուսների հանդեպ: Նրանց երախտագիտությունը մեզ հուզեց»:

* * *

Թուրքմենչայի պայմանագրով (1828 թ. փետրվարի 10) Երևանի և Նախիջևանի խանությունները անցան Ռուսական կայսրությանը: Երևանի խանության կազմում գտնվող Օշականը բնական է՝ նույնպես անցավ ռուսներին: 1828-1840 թթ. այն նախ ընդգրկվում է Հայկական մարզի Երևանի գավառի Կարբիբասարի մահալի[2], այնուհետև 1840-1846 թթ.՝

1 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 5, էջ 164:

2 Տե՛ս «Հայաստանի ազգային ատլաս», հ. Բ (բարտեզ՝ «Հայկական մարզ

Վրաց-Իմերեթական նահանգի Երևանի գավառի[1], իսկ 1849 թ.-ից՝ Երևանի նահանգի Էջմիածնի գավառի[2] սահմաններում:

Կառավարական և վարչատարածքային հարցերի լուծումից հետո ռուսներն անցան Ս. Էջմիածնի իրավունքների կանոնակարգմանը: 1836 թ. մարտի 11-ի կանոնադրությամբ (պոլոժենիե) Օշականը դարձավ Մայր Աթոռի վանքապատկան կալվածք: Պետական հարկեր դրվեցին՝ եկեղեցուն տալու անվան տակ: Դրանք ճշտվեցին 1870 թ. մայիսի 14-ի ցարական հողային հրամանագրով: Վերջինով որոշվեցին իրենից հողային ռենտա ներկայացնող մուլքի, թիուլի և այլ հարկերի չափերը: Որպես մուլք՝ գյուղացիներից վերցվում էր գյուղմթերքի շուրջ 13.35 %-ը, որպես թիուլ՝ 10 %-ը: Այգու մթերքի յուրաքանչյուր 300 կգ-ի համար վարձվում էր 1 ռ. 20 կոպ., իսկ բոստանի յուրաքանչյուր 300 կգ-ից՝ 80 կոպ.: Ամեն տնտեսությունից 4 ռ. 25 կոպ. հարկ էր գանձվում[3]: Այս հարկերը գանձվում էին եկեղեցու անունից, սակայն վերջինիս հարկերի միայն մի չնչին մասն էր հասնում:

Չնայած ցարիզմի գաղութային քաղաքականությանը՝ ռուսական տիրապետությունը որոշակի աշխուժություն մտցրեց արևելահայության մշակութային և հասարակական կյանքում:

19-րդ դ. Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին կիսավեր վիճակում էր: Չնայած 1840 թ. Հովհաննես Ը Կարբեցի կաթողիկոսը (կթղ. 1831-1842 թթ.) նորոգում է այն, սակայն մի քանի տարի անց այն կրկին անմխիթար վիճակում է հայտնվում: 1850 թ. Ներսես Ե Աշտարակեցի Շահազիզյան կաթողիկոսը (կթղ. 1843-1857 թթ.) դիմում է Սինոդին՝ Օշականի գլխավոր եկեղեցին վերակառուցելու համար, սակայն ապարդյուն:

(21.03.1828 թ. - 10.04.1840 թ.)», հեղինակ՝ Բ. Հարությունյան, մասշտաբ՝ 1:800 000), Երևան, 2008, էջ 72:

1 Տե՛ս նույն տեղում (բարտեզ՝ «Անդրկովկասը (1840-1860 թթ.)», հեղինակ՝ Հ. Սարգսյան, մասշտաբ՝ 1:3 000 000), էջ 74:

2 Տե՛ս նույն տեղում:

3 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 6, Երևան, 1981, էջ 48-49:

Վանքի անմխիթար վիճակի մասին մենք մանրամասնորեն տեղեկանում ենք Միքայել Նալբանդյանի «Օշական» բանաստեղծությունից, որը, ըստ գրականագետ Նշան Մուրադյանի, գրվել է 1861 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, Օշականում կամ Ս. Էջմիածնում: Առաջին անգամ այն տպագրվել է «Մեղու» պարբերականի 1861 թ. 117-րդ համարում՝ «Կոմս Էմմանուել» ստորագրությամբ[1]: Ստորև ներկայացնում ենք մեծանուն բանաստեղծի «Օշական» բանաստեղծությունը[2].

Օշակա՜ն,
Վեհ հայերի գերեզման.
Ավերակ տաճարիդ մեջ
Մեսրոպի վայր հանգստյան,

Որ ազգին գիր պարգևեց,
Կյանք տվեց հայոց լեզվին,
Ազգը նորա զլացավ
Գիր ընծայել անշուք շիրմին:

Խարխալյալ տաճարի մեջ,
Քրիստոսյան սեղանի տակ,
Ննջում է այն մեծ հայրը.
Օշական, քեզ փառք պարծանք:

Բայց ազգին որ նա սիրեց,
Որի համար շատ քրտնեցավ,
Այդ ազգին ես չեմ ներում,
Որ Մեսրոպին այդպես մոռցավ:

Գետնափոր այն բեմի տակ
Սողալո՞վ պետք էր մտնել,

1 **Նալբանդյան Մ.**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Երևան, 1945, էջ 506:
2 Տե՛ս նույն տեղում, էջ 98-99:

Կամ անթափանց խավարում
Քարը մոմո՞վ տեսանել:

Ո՛հ, Մեսրոպ, ների՛ր դու ինձ,
Իբրև որդու քո ազգի.
Ապերախտ եմ առաջիդ,
Որպես անդամ ամբողջի:

Օշակա՜ն,
Վեհ հայերի գերեզման.
Քո ժայռից ես ցած իջա,
Ուստի հերոսն մեր Վահան:

Բայց Վահան դեռ նայեցավ
Եկեղեցուն, որ չինեց.
Նա տեսավ շքեղ տաճար
Ու դեպի նա աղոթեց:

Իմ աչքին ի՞նչ երևեց, -
Մի շինվածք կիսակործան,
Որի գլխին կորացած
Երկաթյա խաչ քրիստոսյան:

Դարավոր փոշվով ծածկած,
Տաճարի պարսպի տակ,
Կա մի ծակ, ուր օձի պես
Կարե մտնել մարդ միայնակ:

Առ խարխափ շոշափելով
Գտնում է այն ծակի մեջ
Քարի ծայր.... անգիր, անհուշ....
Այդ ի՞նչ քար է այդպես անտեր:

Լսելով պատմում է քեզ
Գյուղական խեղճ քահանան,
Թե այնտեղ ամփոփված է
Մեր քաջ Վահան Մամիկոնյան,

Որ ազգին կյանքը տվեց,
Հայրենիքին կացավ պաշտպան.
Ազգը նրան գլացավ
Կառուցանել մի գերեզման:

Օշակա՜ն,
Վեհ հայերի գերեզման.
Բողոքի՛ր մինչև երկինք,
Ընդդեմ այս տմարդության:

Բարձրաբերձ քո ժայռերից
Արծաթալիք մեր Քասաղը
Թնդալով անցանում է,
Մինչև Վարդեսի ավանը[1]:

Նվիրական այն հին գետին
Հանձն արա՛ ալիքներին
Հասցընել քո գանգատը
Էջմիածնյան վեհապետին:

Իրավիճակը փոխվում է 1860-ական թթ. վերջերին: Սինոդի անդամ Գևորգ վարդապետի վկայությամբ՝ 1868 թ. Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի Քերեստեճյան կաթողիկոսը (կթդ. 1866-1882 թթ.) ծածուկ հանգանակություն է կազմակերպում Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին վերանորոգելու համար: Մինչև 1872 թիվը 7 000 ռուբլի է ձեռք բերվում, որը բավարար չէր՝ վերականգնման այդպիսի

1 Վարդգեսավան, այսինքն՝ Վաղարշապատ:

աշխատանքներ կազմակերպելու համար: Նույն թվի հուլիսին «Արարատ» ամսագրում լույս է տեսնում մի հոդված՝ «Դամբարան և եկեղեցի սուրբ Մեսրովբ թարգմանչի յՕշական», որտեղ ասվում է, որ շինարարական աշխատանքները կսկսվեն 1873 թ. գարնանը և կավարտվեն 1879 թ., եթե գումարը ժամանակին հավաքվի, ապա շարունակում է. «Արդէն հայազգի ժողովուրդք նոյն գիւղի բաւական նուէր ստորագրած են ի ժապաւինեալ յատուկ տումարին, որ յանձնուած է Հոգաբարձութեան շինութեան: Նաև Գզլարի քաղաքացի Մեծապատիւ և Ազգասէր Մահտեսի Եսայի Իզմիրեան առաջարկութեամբ Վեհ. Հայրապետի՝ գրուեցաւ 500 դուրլի, որում արժանի գովութիւնը և շնորհակալութիւնը կ՚փութամք մատուցանել հրապարակաւ «Արարատ» ամսագրոյս միջոցաւ:

Սոյնպէս կը դրուատեմք Օշական գեղջ ջերմեռանդ ժողովրդեան եռանդը՝ հանդերձ գոհունակութեամբ. և անշուշտ եմք, զի նոքա ինչպէս դրամական նուիրաբերութեամբք նպաստամատոյց կլինին, նոյնպէս և այլ կարևոր միջոցներով շինութեան օգնել երբէք չպիտի դանդաղին»[1]: Շինարարությունն սպասվածի պես ավարտվեց 1879 թ.: Գևորգ Դ-ն շինարարության ավարտվելուն պես թողեց իր բյուրականյան ամառանոցը և գնաց Օշական: Այնտեղ նա կոնդակ արձակեց, ըստ որի եկեղեցու օծումը պետք է կատարվեր 1879 թ. հոկտեմբերի 21-ին: Նշված օրը կատարվում է եկեղեցու օծումը, որից հետո ճաշկերույթ է կազմակերպում եկեղեցու կողքին 1874 թ. կառուցված միահարկ փոքրածավալ մի շենքում: Այդ շենքը արտաքին նմանություն ուներ նույն տարում կառուցված Գևորգյան հոգևոր ճեմարանին: Ճաշկերույթի ժամանակ 560 ռուբլի գումար նվիրատվություն է հավաքվում: Շուտով այդ միասենյակ շենքը հռասենյակ է դառնում, սակայն շենքի ծավալը չի ավելացվում, այսինքն՝ շենքը 3 մասի է բաժանվում: Այն փոքրիկ

1 Դամբարան և եկեղեցի սուրբ Մեսրովբ թարգմանչի յՕշական, «Արարատ», Ս. Էջմիածին, 1872, էջ 286:

հայկական կրթօջախ է դառնում[1]: Ի ուրախություն մեզ՝ հուշաքարը պահպանվել է:

1882 թ. Օշական է այցելում Անդրեաս արքեպիսկոպոս Կոստանդնուպոլսեցին, որը նախկինում Ղարաբաղի թեմի առաջնորդն էր եղել: Նա անգամ իր կողմից հուշաքար է կանգնեցնում Մաշտոցի գերեզմանի մոտ՝ նշելով եկեղեցում կատարված կառուցումների և վերանորոգումների տարեթվերը և կառուցողների ու իր անունը:

1884 թ. Օշականի շինարարական աշխատանքները նոր թափ են առնում: Դա պայմանավորված էր նրանով, որ 1882 թ. Գևորգ Դ-ն մահացել էր, և շինարարական աշխատանքները դադարել էին: Սակայն 1884 թ. նրա ծրագրերն ի կատար ածվեցին: Նախ և առաջ մարմարյա տապանաքար դրվեց Մաշտոցի և տուֆից՝ Վահան Ամատունու գերեզմանների վրա: Ավարտվեց եկեղեցու զանգակատան շինարարությունը: Ղ. Ալիշանի հավաստմամբ՝ զանգակատան օծման ժամանակ Մեսրոպ եպիսկոպոս Սմբատյանի ձեռքով մի մարդաչափ խաչ կանգնեցվեց զանգակատան վրա: Այն նվիրել էին Թիֆլիսցի Թայիրյանները[2]:

1903 թ. հունիսի 12-ին ռուսաց Նիկոլայ 2-րդ կայսեր (1894-1917 թթ.) հրամանագրով բռնագրավման էին ենթակա հայոց եկեղեցու կալվածքները, գույքը, ավանդները: Եկեղեցապատկան կալվածքներից Մայր Աթոռ Ս. Էջմիածնին էին թողնվում միայն այն հողերը, որոնց վրա կամ կային վանքեր և եկեղեցիներ, կամ էլ նոր պետք է կառուցվեին: Այսպիսով, վանքապատկան գյուղերի գյուղատնտեսական հողահանդակները, այդ թվում՝ Օշականի մշակելի հողերը ևս ենթակա էին բռնագրավման: 1905 թ. օգոստոսի 1-ին Նիկոլայ 2-րդը չեղյալ հայտարարեց 1903 թ. հունիսի 12-ի հրամանագիրը, և վանքապատկան կալվածքները մնացին Մայր Աթոռի տնօրինության ներքո:

1 **Վ. վրդ. Տերյան,** Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցին, «Էջմիածին» ամսագիր, Ս. Էջմիածին, 1963, թ. 3, էջ 22-29:

2 Նույն տեղում:

Այնուհանդերձ, 1913 թ. հունվարի 1-ին ցարական իշխանությունների կողմից որոշում կայացվեց, որով մինչ այդ վանքապատկան գյուղ հանդիսացող Օշականի բնակչությանը պարտադրվեց հարկերը վճարել ոչ թե Մայր Աթոռին, այլ կալվածատերերին[1]:

Փաստորեն, Ս. Էջմիածնի վանքապատկան հինգ գյուղերը (Էջմիածին, Մասրարա, Օշական, Եղվարդ, Մուղնի) ձևականորեն մնացին Ս. Էջմիածնի ձեռքում, սակայն, ըստ էության, Օշականը կալվածատիրական սեփականություն դարձավ: Այսպիսով, 1913 թվականից Օշականը դադարում է վանքապատկան կալվածք լինելուց:

1 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 6, էջ 446-447:

ԳԼՈՒԽ Է

Օշականը XX-XXI դարերում

20-րդ դ. առաջին կեսին Օշականում, ըստ էության, նշանակալի որևէ իրադարձություն չի եղել: Ինչպես գիտենք, 1920-1930-ական թթ. խորհրդային իշխանությունների կողմից զանգվածաբար փակվել են հայկական եկեղեցիները, և այդ հարցում բացառություն չի կազմել նաև Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին: 1937 թ. մայիսի 9-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանը գրություն է առաքել Խորհրդային Հայաստանի ներքին գործերի ժողովրդական կոմիսար Խաչիկ Մուղդուսուն՝ խնդրելով կարգադրել տեղական իշխանության մարմնին՝ չփակելու Օշականի եկեղեցին, «որ համահայկական նշանակություն ունի որպես սրբավայր»[1]: Այնուհանդերձ շատ չանցած եկեղեցին փակվել և աստիճանաբար քայքայվել է. ամբողջովին շարքից դուրս է եկել վերմուտնյա փայտյա օթյակը և այլն:

Եկեղեցին վերանորոգման կարիք էր զգում: Այդպիսի դրության մեջ երջանկահիշատակ Վազգեն Ա Պալճյան կաթողիկոսը (կթղ. 1955-1994 թթ.) խորհրդային իշխանություններից ստացած հատուկ թույլտվությամբ 1960 թ. վերաբացել է եկեղեցին: Շուտով հայտնվեցին միլանահայ բարերարներ ծագումով երզնկացի Հայկ և Թորգոմ Ղազարոսյան եղբայրները, որոնք, ի հիշատակ իրենց ծնողների, գումար տրամադրեցին՝ եկեղեցին վերանորոգելու համար:

Վերանորոգչական աշխատանքներն սկսվեցին 1960 թ.: Գևորգ Դ-ի կառուցած փայտե Ս. Սեղանը փոխարինվեց իտալական մարմարից պատրաստված Ս. Սեղանով: Վերջինիս հովանավորները հայր և որդի Գևորգ և Նազար Պալյաններն էին, իսկ ճարտարապետը՝ Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Ա. Գալիկյանը: Նույն 1960 թ. հանվեց եկեղեցու փայտե վերնատունը, և Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզմանի բազալտե տապանաքարը փոխարինվեց օնիքսե տապանաքարով (ճարտարապետ՝ Լ. Սադոյան): 1961 թ. Արթիկի տուֆով պատրաստվեց ներսի Այբուբեն-հուշարձանը, որի հեղինակը Բ. Արզումանյանն է: 1962 թ. Օշական-Աշտարակ ճանապարհի վրա Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի առթիվ «Հայ գրերի 1600-ամյակին» վերտառությամբ երկհատված հուշարձան (ճարտարապետ՝ Ջ. Թորոսյան) կանգնեցվեց, որն էլ սկսեց Օշականի մուտքը խորհրդանշել: Մինչ այդ Մաշտոցի գերեզմանատանը երկաթակուռ մի ջահ է կախվել (ճարտարապետ՝ Ռ. Իսրայելյան): 1964 թ. ճարտարապետ Ա. Իսրայելյանի նախագծով եկեղեցու հարավարևմտյան անկյան մոտ մի աղբյուր է կառուցվում: 1964-66 թթ. կալկաթայաբնակ նորջուղայեցի Պետրոս Ալեքսանյանի բարերարությամբ Հենրիկ Մամյանն ու Հովհաննես Մինասյանը եկեղեցին ներսից զարդարում են «Փառք հայ գրի ու դպրության» որմնանկարաշարով: Որմնանկարները հիմնականում պատկերում են հայ գրերի դերը, Մաշտոցի մուտքը Վաղարշապատ, Վարդանանց պատերազմը, հայկական գարնան միջոցով՝ Հարությունը և հատկապես Հիսուսին խորհրդանշող ծառը: Վերջինս բերք է տալիս 12 նուռ, որոնք 12 առաքյալներին են խորհրդանշում: Դրանք իրենց հերթին բաղկացած են բազում հատիկներից և ապա մասնիկներից, որոնք էլ քրիստոնյաներն են: Նռան անպիտան մասերն էլ ուղիղ հավատքից շեղվածներն են: Խորանի նկարի հեղինակը Հ. Մամյանն է:

Վազգեն Ա-ի նախաձեռնած շինարարական աշխատանքները 1966 թ. ամբողջությամբ ավարտվում են, և եկեղեցին սկսում է վերստին հյուրընկալել ուխտավորներին և տեղի հավատացյալներին:

1 **Ղազախեցյան Վ.**, 1937-ը Հայաստանում, 2-րդ հրատ., Երևան, 2005, էջ 60-61:

Խորհրդային տարիներին Օշականում ստեղծվում են որոշակի ենթակառուցվածքներ: Կարգավորվում է բնակչության զբաղվածության խնդիրը, ընդ որում՝ բնակչության հիմնական զբաղմունք հանդիսացող այգեգործության, պտղաբուծության, բանջարաբուծության և անասնապահության կողքին բնակչության մի մասը սկսում է աշխատել թեթև և սննդի արդյունաբերության, ինչպես նաև մշակութային ոլորտում: Գյուղում բացվում են Երևանի կարի ֆաբրիկայի մասնաճյուղը, գինու գործարան, կերի միջշրջանային ձեռնարկություն: Կրթական և մշակութային հաստատությունների շարքում 1863 թ.-ից գործող միջնակարգ դպրոցից բացի՝ բացվում են ութամյա և երաժշտական դպրոցներ, մշակույթի տուն, 3 գրադարան, մսուր-մանկապարտեզներ: 1964 թ. բացվում է գյուղի անունը կրող մանկական մասնագիտացված առողջարան[1]:

1995 թ. հունիսի 10-ին Օշական է այցելում Գարեգին Ա Սարգիսյան կաթողիկոսը (կթղ. 1995-1999 թթ.), ում տեղանքը շատ է դուր գալիս: Ի հիշատակ իր առաջին այցի՝ նա մի հուշակոթող-արևային ժամացույց է կանգնեցնում Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու առջև: Եկեղեցու կողքին Մաշտոցի անվան դպրոցն էր գործում, որը 1874 թ. Գևորգ Դ կաթողիկոսն էր կառուցել, իսկ 1913 թ.՝ մեծացվել էր: 1996 թ. բարեբար Ջիվանի Կոբոյանի միջոցներով շենքը հիմնովին վերանորոգվել է և վերածվել թանգարանային համալիրի, որում խորհրդակցությունների դահլիճներ, թանգարան և գրադարան են գործում: 1996-97 թթ. Ժիրայր և Հասմիկ Գաբրիելյանների միջոցներով եկեղեցու հարևանությամբ գտնվող երկհարկ մի տան տեղում կառուցվում է Արագածոտնի թեմի (ստեղծվել է Գարեգին Ա-ի կոնդակով, 1996 թ. մայիսի 30-ին) առաջնորդարանը: Առաջին առաջնորդը Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանն էր (03.06.1996 - 01.12.1999): Ներկայումս թեմի առաջնորդն է Տ. Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանը (01.09.2009-ից):

1 Տե՛ս Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, էջ 481:

1998 թ. Լ. Թոքմաջյանը քանդակում է Մաշտոցի, Վռամշապուհի և Սահակ Պարթևի արձանները, որոնք տեղադրվում են գիտաժողովների դահլիճում: Նույն թվականին Լ. Թոքմաջյանը քանդակում է նաև Մաշտոցի տուֆե արձանը, որն էլ եկեղեցու բակում է կանգնեցվում: 2000 թ. Ջ. Կոբոյանի միջոցներով և Գարեգին Բ Ներսիսյան Ամենայն Հայոց կաթողիկոսի (կթղ. 1999 թ.-ից) հոգածությամբ ավարտվում են Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու և նրա շրջակայքի վերանորոգչական աշխատանքները: Ներկայումս եկեղեցում կարող է 800 մարդ տեղավորվել:

2001 թ. Օշականը և Ֆրանսիայի Ալֆորվիլ փոքրիկ քաղաքը քույրանալու հուշագիր են կնքել՝ վերածվելով մշակութային սերտ կապեր ունեցող քույր բնակավայրերի:

2000-ական թթ. շարունակվել է բարեկարգվել Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու տարածքը, կանգնեցվել է այբուբեն-հուշարձանախումբ և այլն: 2007 թ. բացվել է Խրիմյան կրթօջախը: Շարունակում են գործել 2 դպրոցները, մշակույթի պալատը և գրադարանը: Օրեցօր էլ ավելի է բարեկարգվում եկեղեցու տարածքը:

Շարունակվում է նաև գյուղի տնտեսական կյանքի վերաշինումը, ինչը կարևոր գրավական է հանդիսանում տեղական բնակչության խնդիրների կարգավորման համար:

Այսպիսով, Օշականը ներկայումս շարունակում է հոգևոր-մշակութային կենտրոնի նշանակություն ունենալ համայն հայության համար: Բարեկարգված վիճակում գտնվող վանական համալիրը սիրահոժարությամբ ընդունում է իր ուխտավորներին: Ս. Մեսրոպ Մաշտոցի աճյունով սրբագործված վանքը վերստին քրիստոնեական լույսն է սփռում հայոց ազգի հայրենաբնակ և աշխարհասփյուռ զավակներին՝ ներշնչելով ազգային հարատևության հույս ու հավատ և մշտնջենական սեր:

ԳԼՈՒԽ Ը

Օշականի պատմաճարտարապետական հուշարձանները

Օշականը ՀՀ տարբեր մարզերի բնակիչների և աշխարհասփյուռ հայության համար հայտնի է՝ որպես Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզմանատեղի՝ իր հոյակերտ Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցով:

Փաստորեն, Օշականի ճարտարապետական մնացյալ հրապույրները քչերին են հայտնի մեր հանրապետությունում, մինչդեռ Օշականը հարուստ ճարտարապետական ժառանգություն ունի: Հարկ է նշել, որ Օշականի ճարտարապետական գաղտնիքների բացահայտման գործում բացառիկ է Թորոս Թորամանյանի դերը:

Ստորև բերվում են Օշականի առավել հիշարժան ճարտարապետական հուշարձանները:

ա) Դոլմեններ, կրոմլեխներ, կիկլոպյան պատեր, գերեզմաններ, խաչքարեր

Օշականը հարուստ է մեգալիթյան (հունարեն՝ «մեգա»՝ մեծ, «լիթոս»՝ քար, այսինքն՝ «մեծ քար») հուշարձաններով՝ մենհիրներով, դոլմեններով և կրոմլեխներով:

Հին օշականցիները դոլմենները անվանում էին «օղուլի տներ», որը նշանակում է «հսկայի տուն»[1]: Իրականում «դոլմեն»-ը բրետոնական ծագում ունեցող բառ է («tol»՝ սեղան, «men»՝ քար, այսինքն՝ «սեղանաքար») և այժմ արմատացած է ֆրանսերենում («dolmen»)[1]: Դոլմենները ճարտարապետության պատմության մեջ առաջինը հանդիպող ամբողջական կառույցներն են: Նրանցում հայտնաբերվել են մարդկանց ոսկորներ և բրոնզե զարդեր ու գործիքներ: Նախապես դրանք եղել են տոհմական սրբատեղիներ և այնուհետև վերածվել են տոհմապետի գերեզմանի: Դոլմենները տարածված են Եվրոպայի ծովափնյա մարզերում, Հյուսիսային Աֆրիկայում և Ասիայում: Դրանք տարածված են հատկապես Հյուսիսային Կովկասի մերձսևծովյան հատվածներում (Գելենջիկ և այլն) և Ղրիմում, ինչպես նաև՝ Հայաստանում: Եվրոպայում և Հյուսիսային Աֆրիկայում դոլմենները պատկանում են բրոնզի, Հնդկաստանում և Ճապոնիայում՝ երկաթի, Կովկասում՝ բրոնզի և մասնակիորեն երկաթի դարերին[2]:

Թ. Թորամանյանի վկայությամբ՝ Օշականի հարավ-արևելքում՝ Քասաղ գետի ափին, մեծ թվով գերեզմաններ, կրոմլեխներ և դոլմեններ կային: Սակայն դրանք այնքան էլ լավ չեն պահպանվել և, կարծես, անուշադրության են մատնված: Մի տեսակի դոլմենները տապանաքարի են նման, սակայն նրանց ներսը ամբողջովին դատարկ է: Ըստ Թ. Թորամանյանի՝ օշականյան դոլմենների միջին երկարությունը 9,7 մետր էր, իսկ լայնությունը՝ 6,4 մետր: Ներքին լայնությունը 2,6 մետր է: Սրանք գլխավորապես շրջապատված են անշաղախ որձաքարե պարիսպներով՝ 12,8 մետր և 10,5 մետր հեռավորությունների վրա: Երկրորդ տեսակի դոլմենները ունեն 8 մետր արտաքին երկարություն և 4,2 մետր լայնություն: Ներքին երկարությունը 7,5 մետր է, իսկ լայնությունը՝ 3,1 մետր: Սա ծածկած է 1-ից 1,72 մետր ծածկաքարով, որը փակում է ներսի դատարկությունը: Երրորդ տեսակի դոլմեններն ամենափոքրն են՝ ներքինը 1,1, իսկ արտաքին երկարությունը՝ 4,7 մետր[3]:

1 **Թորամանյան Թ.,** Հայկական ճարտարապետություն, հ. 1, Երևան, 1947, էջ 3-4:

1 Տե՛ս "Большая советская энциклопедия", т. 8, Москва, 1972, էջ 416: "Словарь иностранных слов", Москва, 1954, էջ 242:

2 Տե՛ս "Большая советская энциклопедия", հ. 8, էջ 416:

3 **Թորամանյան Թ.,** Հայկական ճարտարապետություն, հ. 2, էջ 220-222:

Այստեղ նաև մեծ թվով կրոմլեխներ կան: Սրանք մեզ մոտ դոլմեններից տարբերվում են միմիայն շրջանաձև 2,4 մ տրամագծով և 0,4 մ հաստությամբ կափարիչով[1]: Բառի ծագումը բրետոնական է («crom»՝ շրջան, «lech»՝ քար, այսինքն՝ «քարե շրջան»[2]): Կրոմլեխների գերակշիռ մասն ստեղծվել է նեոլիթի (նոր քարի դար՝ Ք. ա. 10-րդ հազարամյակի կեսերից մինչև Ք. ա. 6-րդ հազարամյակի կեսերը) շրջանում և բրոնզի դարում (Ք. ա. 4-րդ հազարամյակի կեսերից մինչև Ք. ա. 2-րդ հազարամյակի կեսերը): Սովորաբար կրոմլեխները կազմված են մեծ (մինչև 6-7 մետր բարձրությամբ), առանձին կանգնեցված քարերից, որոնք կազմում են 1 կամ մի քանի շրջաններ: Նրանք օղակում են որոշակի տարածք, որի կենտրոնում երբեմն դոլմեններ և մենհիրներ (բրետոներեն՝ «երկար քար»՝ 3-20 մետր բարձրությամբ, մինչև 300 տոննա քաշով[3], նախատեսված հավանաբար նախնիների պաշտամունքի համար. մեզ մոտ հիմնականում 2-3 մետր բարձրությամբ են հանդիպում) են գտնվում:

Կրոմլեխներ հայտնաբերվել են Ասիայի և Ամերիկայի մի շարք երկրներում, բայց առանձնապես շատ են Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, սկանդինավյան երկրներում: Կրոմլեխի աշխարհահռչակ օրինակ են Սթոնհենջ և Էյվբերի կրոմլեխները Մեծ Բրիտանիայում և կրոմլեխների ու մենհիրների «պուրակը» Ֆրանսիայի Կարնակ քաղաքի մոտ[4]: Ոմանք կրոմլեխ են համարում նաև ՀՀ Սյունիքի մարզի Զորաքարեր (Քարահունջ) կոչվող նախնադարյան բնակավայրը: Կրոմլեխների նշանակության վերաբերյալ վարկածները բազմաթիվ են՝ կրոնական, թաղման արարողությունների վայր, արեգակի տաճար և այլն: Օշականում կրոմլեխներն այդպիսի հստակ շրջանաձև դասավորությամբ չեն պահ-

1 Նույն տեղում, էջ 221-222:
2 Տե՛ս "Большая советская энциклопедия", т. 13, Москва, 1973, էջ 476-477:
3 Տե՛ս "Большая советская энциклопедия", т. 16, Москва, 1974, էջ 66:
4 Տե՛ս "Большая советская энциклопедия", հ.13, էջ 476-477:

պանվել: Նրանց դասավորությունն ավելի մոտ է դոլմենների հասարակ դասավորությանը:

Օշականում դեռ վաղ անցյալից տարածված է եղել թաղման տոհմային ձևը, այսինքն՝ մի ցեղի հանգուցյալների՝ միմյանց կից թաղումը մատուռների կամ էլ իրենց իսկ տան մոտ: Գերեզմանները և խաչքարերը տարածված են ողջ գյուղում: Դրանք բացառիկ են և գեղաքանդակ[1]: Առկա են թե՛ 9-11-րդ, թե՛ 12-14-րդ և թե՛ 15-18-րդ դդ. խաչքարեր, ինչպես նաև խաչային հորինվածքներ և որմնափակեր[2]:

Մարիամ Աստվածածնի մատուռից սկսած՝ ողջ գյուղով մեկ անշաղախ որձաքարերով պատեր են շինված, որոնք, ըստ 20-րդ դ. սկզբին տեղացիների կարծիքի, Վահան Ամատունու ամրոցի մասերն են եղել[3]: Սակայն անհնար է, որ գյուղի ողջ տարածքով Ամատունյաց ամրոցի պատեր լինեն, և հավանաբար դրանք կիկլոպյան պատեր են: Մենք կարող ենք դրանք տեսնել, քանի որ բավականաչափ լավ են պահպանվել:

բ) Դիտի (Դիդի) կոնդի «գանձերը»

«Դիտի կոնդ» կոչվող բլուրը գտնվում է Օշականի արևելյան հատվածում: Բլրի ամբողջ երկայնքով ձգվում են նախաքրիստոնեական և քրիստոնեական հուշարձաններ՝ հին և նոր գերեզմաններ, խաչքարեր, քարայրներ, մատուռներ, կիկլոպյան ամրոց (գագաթին): Պեղումներից պարզվել է, որ վերջինս կառուցվել է Ք.ա. II-I հազարամյակների սահմանագլխին: Յուրաքանչյուր քարի հաստությունը 2 մ է: Դիտի կոնդի կիկլոպյան ամրոցներն այն բացառիկներից են, որոնք հրաշալիորեն պահպանվել են ՀՀ տարածքում: «Դիտի» կամ «Դիդի» կոնդ տեղանունն ունի տարբեր ստու-

1 **Թորամանյան Թ.,** Հայկական ճարտարապետություն, հ. 1, էջ 3-8:
2 Տե՛ս «Հայաստանի ազգային ատլաս», հ. Բ (քարտեզ՝ «Խաչքարերը Հյուսիսարևելյան Հայաստանում», հեղինակներ՝ Ի. Ղարիբյան, Հ. Պետրոսյան, մասշտաբ՝ 1:1 000 000), էջ 169:
3 **Թորամանյան Թ.,** Հայկական ճարտարապետություն, հ. 1, էջ 3-8:

գաբանություններ՝ «դիտակետ» (ժողովրդական ստուգաբանությամբ՝ իբրև Վահան Ամատունու դիտանոց), «մեծ բլուր», «դիակների բարձունք», «ասպվածների բարձունք» և այլն, որոնցից առավել հավանական է առաջինը, քանի որ հիմնավորվում է իրանական բառարմատով: Ստուգաբանման վարկածներ կան նաև Օշականի (ըստ ժողովրդական ստուգաբանության՝ «երանի մեր աչքերին», որ բացականչել է Նոյ նահապետը Օշականի արգավանդ հողերը Արարատի վրայից տեսնելիս, կամ ըստ գրաբարյան ստուգաբանության՝ «աչքի կտոր»), Գյուլլե կոնդի («վարդերի բարձունք») և այլ տեղանունների համար:

գ) Կամուրջ

Մինչև 18-րդ դարը Օշականից Էջմիածին գնալու համար հարկավոր էր հսկայական ճանապարհ կտրել, իսկ քանի որ Օշականը վանքապատկան գյուղ էր, ուստի անհրաժեշտ էր Քասաղ գետի վրա մի կամուրջ կառուցել: Այն կառուցեց Նահապետ Ա Եղեսացի (կթղ. 1691-1705 թթ.) կաթողիկոսը 1691-1705 թթ. ընթացքում: Կամուրջի վրա 1706 թ. արձանագրություն է գրվել շինարարության մասին. «Յիշատակ է կամուրջս Տեառն Նահապետ կաթողիկոսին Սուրբ Էջմիածնի: ՌՃԾԵ թվին»[1]: Կամուրջը հնգակամար է և երկհարկ. կամրջի հնգակամար կառուցվելը Քասաղի ջրառատությամբ էր պայմանավորված, իսկ այժմ ջուրը միայն առաջին, երբեմն՝ երկրորդ կամարով է հոսում: 18-րդ դարի կեսերին կամրջի վիճակը վատթարացել է, և Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսը (կթղ. 1763-1780 թթ.) 1778 թ. վերանորոգել է այն. «Նորոգեցաւ կամուրջս ի ձեռն Տեառն Սիմեոնի Սրբազան կաթողիկոսին Սրբոյ Էջմիածնի Երեւանայ ի մերոյ ՌՄԻԷ թուին»[2]: Այժմ կամուրջը կենսական նշանակություն ունի Օշականի համար:

1 **Ալիշան Ղ.**, Այրարատ, էջ 192:
2 Նույն տեղում:

Կամրջի երկարությունը 62 մ է: Նրա կամարային բացվածքները աջ ափից դեպի ձախ ափը փոխվում են՝ կազմելով 2,5, 3,6, 5,2, 7,1 և 8,5 մետր երկարություն[1]: Կամուրջը հարմարեցված է տեղանքի, այսինքն՝ 2 ափերի անհամաչափ բարձրությանը, քանի որ աջ ափը ձախից ցածր է:

դ) «Ձեռագործ» ճանապարհ և հին կամրջի մնացորդներ: Գյուլլե կոնդ

Կամրջի մասին բաժնում ասվեց, որ կամրջի կառուցումով Ս. Էջմիածնի և Օշականի միջև եղած ճանապարհի երկարությունը կրճատվել է: Բայց չէ՞ որ այդտեղ նաև մի ճանապարհ պետք է մինչ այդ լիներ, որի քասաղաբաժան երկու մասերը միմյանց այդ կամրջով պետք է միանային, ուստի մինչև 20-րդ դ. սկզբներն այդտեղի այժմյան ասֆալտապատ ճանապարհի տեղում 5-6 մ լայնությամբ «ձեռագործ» ճանապարհ է եղել, որի ստեղծման համար պետք է տեղի ժայռերը փորվեին: Այժմ միայն առանձին հատվածներ են մնացել, և դժվար է դա տարբերակել խորհրդային տարիներից հղկված ճանապարհի հատվածներից:

Քասաղ գետի ձախ ափին Թ. Թորամանյանը հնագույն կամրջի մի ոտք է հիշատակում: Հիմա դժվար է որոշել նրա տարիքը, քանի որ նրանից գրեթե ոչինչ չի պահպանվել: Թ. Թորամանյանի հաշվարկներով, այն պետք է կառուցված լիներ առնվազն 13-14-րդ դդ.[2]:

Թ. Թորամանյանը գրում է, որ Օշականի հարավ-արևելքում՝ Դիտի կոնդից հարավ, գտնվում է «Գյուլլե կոնդ» կոչվող բլուրը: Ի տարբերություն Դիտի կոնդի՝ այս բլուրն առանձնակի կարևոր նշանակություն ունեցող հուշարձաններով աչքի չի ընկնում:

1 **Հարությունյան Վ.**, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992, էջ 446:
2 **Թորամանյան Թ.**, Հայկական ճարտարապետություն, հ. 2, էջ 220-224:

ե) Ս. Սիոն եկեղեցի («Մանկանոց»)

Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցուց 2 կմ հյուսիս-արևմուտք գտնվում է գյուղի երկու եկեղեցիներից մյուսը՝ Ս. Սիոնը: Այն նաև «Մանկանոց» են անվանում, քանի որ դա նրա գտնվելու վայրի անվանումն է: Տեղանունը հավանաբար տրվել է «40 մանկանց» նահատակների պատվին:

Այս եկեղեցին, գտնվելով Շաղվերդ գետի ափին, Օշականի հյուսիսարևմտյան հատվածում է: Թ. Թորամանյանը նշում է, որ վերջինի մեջ պահպանվել է (գուցե հենց այդքան էլ եղել է) ընդամենը մեկ արձանագրություն, որը 12-րդ դ. վերջով (1200 թ.) է թվագրվում[1]: Բայց Ղ. Ալիշանն իր «Այրարատ»-ում նշում է ևս 2 արձանագրությունների մասին (1221 և 1295 թթ.)[2], որտեղ փոքրիկ տեղեկություն է տրվում այդ շրջանում տեղի հոգևորականության մասին: Ի դեպ, հետաքրքիրն այն է, որ Ղ. Ալիշանը կարծում է, թե այս եկեղեցու տարածքի «Մանկանոց» կոչվելու պատճառը ոչ թե նահատակված «40 մանուկների» պատվին է, այլ այստեղ բնակված ոմն Մանուկ երեցի անունով:

Ս. Սիոն եկեղեցին կառուցվել է 7-րդ դարի 2-րդ կեսին: Թ. Թորամանյանը, սակայն, վիճելի է համարել դրա կառուցման դարը, քանի որ այն ընդգրկում է 7-րդ, 9-րդ և 10-րդ դարերի հայկական ճարտարապետությանը բնորոշ հատկանիշները[3]: Սակայն հարկ է նախապատվությունը տալ 7-րդ դար տարբերակին: Դրան դումարվում են նաև եկեղեցու երկու վերանորոգումները՝ 9-րդ և 10-րդ դդ., և խնդիրը լուծված է: Այն վերանորոգվել է նաև 1950 թ., և եկեղեցին պահպանվել է գրեթե ամբողջական վիճակում:

Ընդհանուր առմամբ եկեղեցին իր հորինվածքով խաչաձև է: Մուտքի դուռն արևմուտքից է: Թ. Թորամանյանի կարծիքով, հարավային թևի արևմտյան ճակատում մի փոքր

1 Նույն տեղում:
2 **Ալիշան Ղ.**, Այրարատ, էջ 189-190:
3 **Թորամանյան Թ.**, Հայկական ճարտարապետություն, հ. 2, էջ 220:

ցածրիկ դուռ է եղել, որն այժմ փակված է: Եկեղեցիներում այսպիսի դռների կառուցումը Թ. Թորամանյանը բացատրում է այն հանգամանքով, որ այդ կերպ հոգևորականները ցանկանում էին, որ եկեղեցի մտնողներն ստիպված լինեին ծնկի գալ: Նա նաև նշում է, որ այսպիսի դռնով եկեղեցիներ ողջ պատմական Հայաստանի տարածքում ընդամենը երեք տեղ կարող ենք հանդիպել՝ Բագարանի Ս. Կաթողիկե եկեղեցում (7-րդ դ.), Հոռոմոսի (Ս. Մինաս) վանքում (10-րդ դ.) և Օշականի Ս. Սիոն եկեղեցում[1]: Փաստորեն, այս եկեղեցին հայկական ճարտարապետության բացառիկ օրինակներից է:

զ) Օշականի հուշայունը

Ս. Սիոն եկեղեցու բակում մի հրաշագեղ կոթող է կանգնեցված, որը վերագրվում է 582-602 թթ. գահակալած բյուզանդական կայսր Մորիկին (Մավրիկիոս) կամ նրա մորը: Տեղացիների հավաստմամբ՝ նախկինում այն Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու մոտակայքում է կանգնեցված եղել: Թ. Թորամանյանը հավանական չի համարում դրա՝ Մորիկի կամ նրա մոր համար կանգնեցված լինելը՝ ելնելով կոթողի ճարտարապետական հատկանիշներից՝ հիմք ընդունելով տեղական հնամենի քանդակագործության ոճը, սակայն այժմ վերոնշյալ տարբերակը քիչ թե շատ գերակշռող է: Այս կարծիքին հիմք է ծառայում Կիրակոս Գանձակեցու թողած հիշատակությունն առ այն, որ Մորիկը ծագումով Օշականի հայ էր[2]: Այս կոթողը հիմնականում բյուզանդական ոճ ունի և, մասնավորապես՝ նաև Զվարթնոցի տաճարի ոճը: Նաև հարց է առաջանում, թե ով է այն կանգնեցրել: Որոշակի պատասխան չկա, բայց կան ակնարկներ. եթե այն կայսեր մոր համար է, ապա դա կանգնեցրել է հենց ինքը՝ Մորիկը, իսկ եթե այն իր պատվին է, ապա՝ որևէ բյուզանդացի պաշտոնյա: Թ. Թորամանյանը մաս առ մաս նկարագրում է կոթողը.

1 Նույն տեղում:
2 **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պատմություն, աշխ. Վ. Առաքելյանի, Երևան, 1982, էջ 47:

1. Ներքևում երեք աստիճաններ են,

2. ապա խողովակաձև մի սյուն է բարձրանում, որի կենտրոնում 1,1 մ երկարությամբ և 0,92 մ բարձրությամբ միակտոր մի պատվանդան է զետեղված,

3. վերջինիս վրա 3,72 մ բարձրությամբ մի ութանկյուն սյուն է վեր խոյանում, որ եզերվում է գագաթի խոյակով,

4. սա էլ կողովաձև խոյակով է եզերված եղել, որի քանդակները անչափ նման էին Զվարթնոցի քանդակներին[1], ինչի պատճառով էլ ենթադրվել է, թե այս կոթողը Զվարթնոցի օրինակով է կառուցվել: Սակայն վերջին տեսակետը հիմնավորում չունի, քանի որ և՛ Մորիկը, և՛ առավելապես նրա մայրը Զվարթնոցի կառուցումից շուտ են մահացել: Փաստորեն, կարելի է միայն ենթադրել, որ Զվարթնոցի շինարարները կարող էին որոշ չափով օգտվել այս կոթողի օրինակից:

Հուշասյունը պահպանված է ոչ բարվոք վիճակում. աստիճանաձև պատվանդանը քայքայված է, բունը՝ ջարդված, առանց պսակող խոյակի է: Այդ իսկ պատճառով այս կոթողի մասին ամբողջական գաղափար ենք կազմում Թ. Թորամանյանի վերակազմության նախագծով:

Է) Մատուռներ

Օշական գյուղը հարուստ է մատուռներով՝ Թուխ Մանուկ (Փոքր մատուռ), Ս. Գրիգոր Լուսավորիչ, Սուրբ Թադեոս առաքյալ, Ս. Սարգիս, Ս. Մարիամ Աստվածածին (Քարայր-մատուռ) և բազմաթիվ այլ սրբատեղիներ:

Ամենախոշորը Ս. Գրիգոր Լուսավորիչ մատուռն է: Թ. Թորամանյանի վկայությամբ՝ Օշականում կա «Թուխ Մանուկ» անունով մատուռ: Այն գտնվում է Դիտի կոնդի գագաթին: Թ. Թորամանյանն ասում է, որ այս մատուռը կառուցվել է 19-րդ դ. վերջին կամ էլ 20-րդ դ. սկզբին, սակայն 13-14-րդ դդ. կառուցված և ապա ավերված մատուռի

1 **Թորամանյան Թ.,** Հայկական ճարտարապետություն, հ. 2, էջ 54, 55:

հիմքերի վրա[1]: Խորհրդային տարիներին այն վեր է ածվել պահեստի, իսկ 1990 թ. տեղի բնակիչների շնորհիվ որոշակիորեն կարգի է բերվել: Հենց այս առթիվ մատուռի՝ նույն այդ ժամանակ պատրաստված երկաթե դռան վրա գրություն կա, որտեղ մատուռը «Ս. Գրիգոր Լուսավորիչ» անունով է:

Մեկ այլ մատուռ Թ. Թորամանյանը «Փոքր Թուխ Մանուկ» կամ «Փոքր մատուռ» է անվանում: Ըստ նրա՝ մատուռը կառուցվել է 14-րդ դ. վերջին կամ էլ 15-րդ դ. սկզբին, սակայն մատուռի վրա 13-րդ դ. գրություններ կան, ինչը խոսում է նրա՝ 13-րդ դարում կառուցված լինելու մասին: Ըստ Թ. Թորամանյանի՝ մատուռի երկարությունը 5,16 մետր էր, լայնությունը՝ 3,56 մետր[2]: Նրա աջ կողմում կա մի ճոխ պատվանդանավոր խաչքար, որը կանգնեցվել է 13-րդ դ. (1265 թ.): Խաչքարի ամբողջական բարձրությունը կազմում է 4,55 մետր՝ պատվանդանինը՝ 1,07 մետր, խաչքարինը՝ 1,74 մետր[3]: Շրջակայքում կան բազմաթիվ միջնադարյան գերեզմաններ, ինչպես նաև՝ նորերը: Մատուռը գտնվում է Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցուց ընդամենը 200-300 մետր հեռավորության վրա:

Օշականի արվարձաններից մեկում է գտնվում 13-րդ դ. կառուցված Ս. Թադեոս առաքյալ մատուռը:

Հայ ճարտարապետության ինքնատիպ կառույցներից է Ս. Սարգիս մատուռը, որ կառուցվել է Ս. Թարգմանչաց պատվին և կրել է նաև «Ս. Թարգմանչաց վանք» անվանումը: Այն գտնվում է Օշականի կամրջից շուրջ 0,5 կմ հեռավորության վրա՝ ժայռի խոռոչում: Այն իրականում քարանձավ է, որն արտաքուստ պատել են մի քանի սալիկներով: Զարմանալի է, թե ինչպես են ժամանակին մարդիկ և, մասնավորապես՝ հոգևորականները բարձրացել այդտեղ: Հավանաբար այդտեղ ինչ-որ աստիճան կամ նման տիպի կառույց է եղել, ինչի հետքերը հազիվ կարելի է նկատել ժայռի վրա: Թ. Թորա-

1 Նույն տեղում, էջ 222, 223:

2 Նույն տեղում, էջ 223:

3 Նույն տեղում:

մանյանի այցի ժամանակ այդտեղ ոչ մի աստիճան էլ չի եղել: Այդ իսկ պատճառով նա չի կարողացել այն մանրամասնորեն ուսումնասիրել: Այժմ այդտեղ տեղացիների կողմից շինված փայտե վտանգավոր մի աստիճան է: Մատուռում կարելի է գտնել կառուցման մասին արձանագրություն, որից պարզ է դառնում, որ այն կառուցվել է 13-րդ դ.: Շահխաթունյանցը մատուռում հիշատակում է 1624/1625 թ. մի արձանագրություն ևս[1]:

Քասաղ գետի ափին՝ Օշականի կամրջից ներքև, մի մատուռ կա, որը Ս. Մարիամ Աստվածածին է կոչվում: Այն իր բարձր դիրքի պատճառով հաճախ «Վիմափոր» կամ էլ «Քարայր» մատուռ է կոչվում: Թ. Թորամանյանը հավանական է համարել, որ մատուռը կառուցվել է նախաքրիստոնեական շրջանում և որպես նվիրական տեղ է ծառայել: Նման տեսակետը նա հիմնավորում է նրանով, որ խորանը ուղիղ դեպի արևելք չէր նայում և մի կերպ հարմարեցված էր այդ դիրքին[2]:

* * *

Վերը նշված բոլոր կառույցներից զատ Օշականում կան նաև բազմաթիվ այլ ճարտարապետական հուշարձաններ:

Առանձնապես հետաքրքիր են 19-րդ դ. և 20-րդ դ. սկզբին կառուցված տները, որոնցից պահպանվել են միայն մի քանիսը: 1901 թ. կառուցված մի քանի տների օրինակով անգամ այսօր կարելի է հավաստիանալ, որ բնակելի տները գերազանցապես միհարկանի են, մուտքը՝ կամարաձև, ճակատին էլ գրված է կառուցման տարեթիվը: Համալիրի պարտադիր մաս են կազմում տնամերձ այգին, ինչպես նաև տնտեսական օժանդակ կառույցները:

1 Տե՛ս **Յովհ. եպս. Շահխաթունեանց,** Սփորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. Ա, էջ 81:

2 Տե՛ս **Թորամանյան Թ.,** Հայկական ճարտարապետություն, հ. 2, էջ 223:

Այսպիսով, Օշականը մեզ է ներկայանում ինքնատիպ պատմաճարտարապետական ժառանգությամբ՝ կիկլոպյան ամրոցներով, դղյուններով, կրոնական ճարտարապետական համալիրներով և տաճարով, անտիկ դամբարանադաշտով, միջնադարյան եկեղեցիներով, մատուռներով, խաչքարերով ու գերեզմաններով, 19-20-րդ դդ. սահմանագլխին կառուցված ինքնատիպ տներով և այլն:

ԳԼՈՒԽ Թ

Զբոսաշրջության զարգացման ներուժը և երթուղիները Օշականում

Որևէ տարածքում զբոսաշրջության ձևավորման ու հետագա զարգացման համար անհրաժեշտ են որոշակի նախադրյալներ ու գործոններ, որոնց ամբողջությունը կոչվում է զբոսաշրջության զարգացման ներուժ: *Վերջինիս համակարգում առանձնացվում են* զբոսաշրջային ռեսուրսները, ենթակառուցվածքները և նյութատեխնիկական բազան: *Օշականում վերջին երկու ենթահամակարգերի սնանկության պայմաններում առավել կարևորվում են զբոսաշրջային ռեսուրսները, որոնք զբոսաշրջության ընթացքում մարդկանց հետաքրքրությունը բավարարող պատմամշակութային, գիտահետազոտական, բնակլիմայական և այլ բնույթի օբյեկտներն ու երևույթներն են: Նշվածներից Օշականի համար առավել բնութագրականը, ինչպես արդեն համոզվել ենք աշխատանքի նախորդ գլուխներում,* պատմամշակութային ժառանգությունն է՝ *պատմաճարտարապետական կառույցները (մեգալիթյան հուշարձաններ, եկեղեցիներ, կացարաններ են), սոցիո-նորմատիվային մշակույթը (ավանդական նիստուկացը, սովորույթները են), մշակույթի սպասարկու օբյեկտները (թանգարան, գրադարան են):*

Օշականում հնարավոր է հատկապես ճարտարապետահնագիտական (մեգալիթյան հուշարձաններ, եկեղեցիներ, կացարաններ են) և գյուղական (սպասարկման օբյեկտների փոխարեն գյուղական տների վարձակալմամբ, ինչը հնարավորություն է տալիս՝ հետևելու սոցիո-նորմատիվային մշակույթին) ուղղվածության զբոսաշրջության զարգացումը:

Մնացյալ ուղղվածությամբ զբոսաշրջության զարգացման համար պայմանները սահմանափակ են. օրինակ՝ էկոլոգիական զբոսաշրջության տեսանկյունից առավելագույնը կարելի է հետևել անապատացման գործընթացների տեղական արտահայտությանը, իսկ ռեկրեացիան հնարավոր է կազմակերպել միայն Քասաղի գետահովտի ռացիոնալ օգտագործման պարագայում:

Զբոսաշրջության ռացիոնալ կազմակերպման համար անհրաժեշտ է կազմել զբոսաշրջային հետաքրքիր երթուղիներ: Օշական այցելելիս ՀՀ ներքին և օտարերկրյա զբոսաշրջիկների համար առաջարկում ենք հետևյալ երթուղիները.

1. Գիտաճանաչողական. *Երևան-Աշտարակ-Բյուրականի աստղադիտարան-Ամբերդ-Օշական-Աշտարակ-Երևան:*
2. Էկոճանաչողական. *Երևան-Հովհաննավանք-Սաղմոսավանք-Ապարանի ջրամբար-Ապարան-Աշտարակ-Օշական-Երևան:*
3. Ընդհանուր ճանաչողական. *Երևան-Աշտարակ-Օշական-Օշականի կամուրջ-Ս. Էջմիածին-Զվարթնոց-Երևան:*
4. Ճանաչողական. *Երևան-Աշտարակ-Օշական-Աղձք-Աշտարակ-Երևան:*
5. Պատմահնագիտական. *Երևան-Աշտարակ-Օշական-Արուճ-Թալին-Մաստարա-Աշտարակ-Երևան:*

Մեր կարծիքով, լավագույնը ընդհանուր ճանաչողական երթուղին է, որը միաժամանակ թարմություն կարող է հաղորդել Երևան-Ս. Էջմիածին ավանդական երթուղուն:

Մեր կողմից նշված երթուղիների շրջանակներում անհրաժեշտ է ունենալ նաև ներքին երթուղի: Վերջինս ընդհանուր ճանաչողական երթուղու շրջանակներում կարող է ունենալ հետևյալ հաջորդականությունը՝ Աշտարակ-«Հայոց գրեր-1600» հուշարձան-գինու գործարան-կենտրոնական

փողոց (ավանդական բնակելի տներ, կենցաղ)-Ս. Մեսրոպ Մաշտոց վանք-Օշականի կամուրջ: Պատմահնագիտական երթուղու պարագայում կարելի է ներառել նաև արշավախմբային այց Դիտի կոնդ բլրի գագաթ՝ դիտելու Թուխ Մանուկ և Ս. Գրիգոր Լուսավորիչ մատուռները, պատվանդանավոր հսկա խաչքարը, կիկլոպյան ամրոցը և հատկապես Վանի թագավորության ժամանակաշրջանի ամրոց-բնակավայրը: Հարկավոր է ի նկատի ունենալ նաև Օշականից դուրս գալիս այց գյուղի Ս. Սիոն եկեղեցի:

Հնարավոր է նաև Երևան-Օշական-Երևան զբոսաշրջային առանձին երթուղի սահմանել, թեև անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայությունը ներկայումս չի կարող ապահովել մեկօրյա զբոսաշրջային ուղևորություն: Այնուհանդերձ, մենք ներկայացնում ենք առավել հետաքրքրական հնարավոր երթուղի. Երևան-Աշտարակ-«Հայոց գրեր-1600» հուշարձան-գինու գործարան-կենտրոնական փողոց (գյուղական զբոսաշրջության օբյեկտներ՝ սննդի կազմակերպմամբ)-Ս. Մեսրոպ Մաշտոց վանք (ավտոտրանսպորտի կայանմամբ, Ս. Մեսրոպ Մաշտոցի արձան-Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցի-Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզման-Վահան Ամատունու գերեզման-դպրատուն-17-19-րդ դդ. գերեզմանոց-այբբենական խաչքարեր)-Դիտի կոնդ բլուր (Թուխ Մանուկ մատուռ-պատվանդանավոր հսկա խաչքար-Ս. Գրիգոր Լուսավորիչ մատուռ-Վանի թագավորության ժամանակաշրջանի ամրոց-բնակավայր)-Օշականի կամուրջ-Քասաղի գետահովիտ (սննդի կազմակերպմամբ)-Ս. Սարգսի մատուռ-Ս. Սիոն եկեղեցի (ավտոտրանսպորտի վերագործածմամբ)-Աշտարակ-Երևան: Այս երթուղին հնարավորություն կտա՝ ամբողջական պատկերացում կազմելու Օշականի նշանակության վերաբերյալ, ուստի ստորև ներկայացնում ենք երթուղու սխեմատիկ գծապատկերը.



Այսպիսով, Օշականն ունի զբոսաշրջության զարգացման զգալի ներուժ, ինչը կարող է առավել ռացիոնալ օգտագործվել զբոսաշրջային երթուղիների համակարգված մշակման և սպասարկման օբյեկտների ցանցի կատարելագործման պայմաններում:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Աշտարակ-Օշական ճանապարհով առաջանալիս հեռվից կնկատենք ծառերի մեջ պարփակված գեղեցիկ մի հուշարձան, որը Հայ գրերի գյուտի 1600-ամյակին նվիրված երկհատված հուշարձանն է: Այն նշանավորում է Օշականի սկիզբը: Այդտեղից մինչև եկեղեցի մոտ 3 կմ է: Շարժվելով առաջ՝ աջ և ձախ կողմերում կտեսնենք խաղողի այգիներ: Այնուհետև սկսվում են տներ և գյուղի գինու գործարանը: Շարունակելով ճանապարհը դեպի Մաշտոցի գերեզմանատեղի՝ կանցնենք գյուղի ամենակարևոր փողոցով, ուր գտնվում են գյուղի մշակույթի տունը, բազմաթիվ հին տներ, որոնց տարիքն անցնում է 100-ից: Փողոցն իր վերջնամասում կտրուկ ձախ է թեքվում. առջևում բացվում է հիանալի մի տեսարան՝ Ս. Մեսրոպ Մաշտոց հոյակերտ եկեղեցին՝ Դիտի կոնդ բլրի գրկում:

Ամռան ամիսներին մի շատ գեղեցիկ տեսարանի կարելի է ականատես լինել. առավոտյան և երեկոյան արագիլները գալիս և կանգնում են եկեղեցու ճակատի վերնամասում՝ խորհրդավոր մի նշանակություն տալով առանց այն էլ շատ հոգևոր այս վայրին:

Օշականը ՀՀ ամենատեսարժան վայրերից մեկն է: Այն, ինչպես տեսանք մեր աշխատանքում, ունի զբոսաշրջության զարգացման հիանալի նախադրյալներ: Ճիշտ է, Օշականը զբոսաշրջիկներին գրավում է նախևառաջ Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզմանով և նրա վրա կառուցված եկեղեցով, մինչդեռ Օշականում կան նաև այլ տեսարժան վայրեր՝ կիկլոպյան ամրոցը, Ս. Սիոն եկեղեցին և այլն: Միայն թե դրանք

պետք է պատշաճ ձևով ներկայացնել թե՛ արտասահմանյան զբոսաշրջիկներին և թե՛ ՀՀ քաղաքացիներին: Փաստորեն, նաև այս նպատակով է գրվել մեր աշխատությունը:

Հուսով ենք, որ մեր այս փոքրածավալ ուսումնասիրության մեջ կարողացանք ամբողջացնել համայն հայության կարևորագույն սրբատեղիներից մեկը հանդիսացող Օշական գյուղի պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

РЕЗЮМЕ

Село Ошакан находится в Арагацотнской области Республики Армения в 25 километрах от Еревана. Население составляет 5 106 человек (2001 г.); в основном армяне.

История Ошакана начинается с третьего тысячелетия до н. э. На вершине холма Дити-конд, который находится недалеко от церкви святого Месропа Маштоца, в конце двадцатого века была найдена крепость "циклопов" трех-четырехтысячелетней давности.

В 331 г. н. э. кочевые племена мазкутов с Северного Кавказа начали войну против Армении и завоевали тогдашнюю столицу Армении – Вагаршапат (Эчмиадзин). Но царь Хосров Второй (330-338 гг.), сын Тиридата Третьего Великого (274-276, 288/298-330 гг.) сумел собрать все войска и заставил врага отступать до крепости Ошакан, где и в 331 г. армянские войска одержали блестательную победу над мазкутами. Это первое упоминание топонима "Ошакан".

В 405 г. Святой Месроп Маштоц создал армянский алфавит. Маштоц умер в 440 г. и был похоронен в Ошакане. В 443 г. Ваан Аматуни построил церковь над могилой Маштоца.

Ошакан в России больше известен, как место, где 17 августа 1827 г. произошло сражение между русскими и персидскими войсками. Весной 1827 г., после того, как персы первыми начали войну в 1826 г. и после нескольких удач начали сами терпеть поражения, русские начали поход на Ереванское ханство. Но сын персидского шаха не смирился с этим и с 30 000 армией напал на Эчмиадзин. Генерал А. Красовский, который отдыхал со своей дивизией на склонах горы Арагац, немедленно поспешил в Эчмиадзин с 3 000 солдатами, в том числе и 100 армянами – добровольцами. Стороны встретились друг с другом

в селе Ошакан. Армия Аббаса-Мирзы, сына шаха, была в 10 раз больше русской. Сначала персы выигрывали, но, увидев это, один армянин, служивший в персидской армии пушкарем, открыл огонь с тыла персидской армии. Персы подумали, что генерал Паскевич пришел на помощь, и поэтому начали отступать. Несмотря на огромные потери (свыше 1 000 человек), русская армия одержала победу над персами, у которых потерь было значительно больше (свыше 3 500 человек). По словам участника сражения декабриста Лачинова, армяне доверяли русской армии и помогали, как могли. После Туркманчайского договора (10.02.1828 г.) Восточная Армения вошла в состав Российской Империи.

Церковь святого Месропа Маштоца была полностью отремонтирована в 1873-1879 гг. (при католикосе Геворке Четвертом), 1960-1966 гг. (при католикосе Вазгене Первом), 1996-2000 гг. (при католикосах Гарегина Первого и Гарегина Второго).

Сейчас Ошакан имеет все шансы, чтобы стать одним из туристических центров нашей страны. В Ошакане, кроме церкви Святого Месропа Маштоца, находятся также и множество часовень (Св. Саркис, Св. Фадей, Св. Григорий, Тух Манук и т. д.), дольменов (2-е тыс. д. н. э.), кромлехов (2-е тыс. д. н. э.), хачкаров, ошаканский мост (1706 г.), церковь Святой Сион (7-й век), стелла византийского императора Маврикия (6-й или 7-й век), памятник русским воинам, павшим в Ошаканской битве (1833-1834 гг.) и т. д..

SUMMARY

Oshakan is a village in Aragatsotn Province of the Republic of Armenia. 5 106 people (2001) live in Oshakan, which is 24.5 kilometers far from Yerevan.

The history of Oshakan begins from the 3nd millennium B. C. There was a huge fortification of the Bronze Age in the 2nd millennium B. C. Later there was built a large fortification with its significant castle in the Van kingdom (Urartian) era (the 7th century B. C.).

The name "Oshakan" was firstly mentioned in 331 A. D. by Armenian historians Pavstos Buzand and Movses Khorenatsi. They mentioned Oshakan as the place, where the Armenian army defeated the army of Caucasian ethnic groups. After the battle Oshakan became a patrimony of Amatuni family, as Vahan Amatuni, the head of the family, was one of the most significant figures at Oshakan battle.

In 440 the author of the Armenian alphabet, Mesrop Mashtots died. He was buried in Oshakan, as Amatunies held one of the most influential positions within the Armenian nobility. In 443 on the place of Mashtots' grave a large church was built and named "St. Mesrop Mashtots' church". Later the church was reconstructed for many times, especially in 1873-1879 (by Catholicos Gevork IV), 1960-1966 (by Catholicos Vazgen I) and 1996-2000 (by Catholicoses Karekin I and Karekin II).

Oshakan was a very important agricultural centre in the Middle Ages. Formerly being a part of the patrimonies of Armenian noble families (Amatuni, Pahlavuni), it became a patrimony of the Armenian Apostolic Church in 1431, staying under the Church's control until 1913.

Oshakan is famous for its wonderful khachkars (cross-stones), St. Sion's church (the 7th century), a bridge (1706), the dolmens and cromlechs (the 2nd millennium B. C.), a monument (1833-1834) devoted

to the Russian soldiers who died in the battle of Oshakan (17.08.1827), a monument (the 6th or 7th century) devoted to the Byzantine emperor Maurikius (582-602), ... etc., but the most important and significant historical and cultural sight is St. Mesrop Mashtots' church.

Oshakan is a very beautiful place to visit, and I think, in a short period of time it will become one of the most significant historical and cultural centres of not only Armenia, but also of the entire world.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայալեզու գրականություն

ա) Սկզբնաղբյուրներ

1. **Աբրահամ Կրետացի,** Պատմութիւն անցիցն իւրոց և Նատր-շահին Պարսից, քննական բնագիր, աշխ. Ն. Ղորղանյանի, Երևան, 1973:
2. **Առաքել Դավրիժեցի,** Պատմություն, աշխ. Վ. Առաքելյանի, Երևան, 1988:
3. **Եղիշե,** Վարդանի և Հայոց պատերազմի մասին, աշխ. Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1992:
4. **Երեմիա Օշականցի,** Աստուածակառոյց մեծի Աթոռոյս սրբոյ էջմիածնի համայն նուիրակաց յաղագս նուիրակական արդեանց շրջագայելի քաղաքքն հանդերձ գիւղաքաղաքօք նոցին, ըստ յատուկ յատուկ անուանց մի ըստ միոջէ ստորագրին, «Դիւան հայոց պատմութեան», գիրք Գ, Թիֆլիս, 1894, էջ 797-806:
5. **Թովմա Արծունի և Անանուն,** Պատմություն Արծրունյաց տան, աշխ. Վ. Վարդանյանի, Երևան, 1978:
6. **Կիրակոս Գանձակեցի,** Հայոց պատմություն, աշխ. Վ. Առաքելյանի, Երևան, 1982:
7. **Կորյուն,** Վարք Մեսրոպ Մաշտոցի, աշխ. Ա. Մաթևոսյանի, Երևան, 1994:
8. **Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի,** Հայոց պատմություն, աշխ. Գ. Թոսունյանի, Երևան, 1996:
9. **Ղազար Փարպեցի,** Հայոց պատմություն և թուղթ Վահան Մամիկոնյանին, աշխ. Բ. Ուլուբաբյանի, Երևան, 1982:
10. **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, աշխ. Ստ. Մալխասյանի, Երևան, 1940:

11. **Սիմեոն կաթողիկոս Երևանցի,** Ջամբռ, թարգմ. և ծանոթագր.՝ Վ. Համբարձումյանի, պատմաաշխ. ծանոթագր. և քարտեզներ՝ Գ. Բաղալյանի, Երևան, 2003:

12. **Վարդան Արևելցի,** Տիեզերական պատմություն, աշխ. Վ. Թոսունյանի, Երևան, 2001:

13. **Ուխտանէս եպիսկոպոս,** Հայոց պատմութիւն, աշխ. Վ. Առաքելեանի, Երեւան, 2006:

14. **Փավստոս Բուզանդ,** Պատմություն Հայոց, աշխ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968:

15. Դամբարան և եկեղեցի սուրբ Մեսրովբ թարգմանչի յՕշական, «Արարատ», Ս. էջմիածին, 1872, էջ 286:

16. «ՀՀ 2001 թ. մարդահամարի արդյունքները», ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2003:

17. Մեր կողմից ընթերցված տեղական վիմափոր արձանագրություններ:

18. 1990-2000-ական թթ. արձանագրություններ, որոնք հրատարակված չեն:

բ) Ուսումնասիրություններ

1. **Ադոնց Ն.,** Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987:

2. **Ալիշան Ղ.,** Այրարատ, Վենետիկ, 1890:

3. **Ալիշան Ղ.,** Շիրակ, աշխ. Ա. Իսոյանի, Պ. Հովհաննիսյանի և Դ. Սարգսյանի, Երևան, 2010:

4. **Աճառյան Հր.,** Հայոց գրերը, հ. 1, Երևան, 1968:

5. **Ավետիսյան Հ., Բոբոխյան Ա.,** Ուրարտուի հնագիտություն (Ամրոց-բնակավայրեր և դամբանային համալիրներ), Երևան, 2010:

6. **Բարխուդարյան Ս.,** Մի քանի դիտողություններ Երևանի Կաթողիկե եկեղեցու արձանագրությունների վերաբերյալ, «Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ. հասարակական գիտություններ», Երևան, 1947, թ. 5, էջ 71:

7. **Թորամանյան Թ.,** Հայկական ճարտարապետություն, հ. 1, Երևան, 1947:

8. **Թորամանյան Թ.,** Հայկական ճարտարապետություն, հ. 2, Երևան, 1948:

9. **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ.,** Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, Երևան, 2001:

10. **Հարությունյան Վ.,** Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992:

11. **Ղազախեցյան Վ.,** 1937-ը Հայաստանում, 2-րդ հրատ., Երևան, 2005:

12. **Մ. արք. Օրմանեան,** Ազգապատում, հ. 2, Ս. էջմիածին, 2001:

13. **Մալխասեանց Ս.,** Հայերէն բացատրական բառարան, հ. 4, Երևան, 1945:

14. **Մալխասյան Մ.,** Սիմեոն Երևանցու «Ջամբռ» երկի աղբյուրագիտական արժեքը Հայաստանի պատմական էթնոժողովրդագրության համար, «ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու», հ. 1, Երևան, 2012, էջ 166:

15. **Մանանդյան Հ.,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, Երևան, 1957:

16. **Յովհ. եպս. Շահխաթունեանց,** Ստորագրութիւն Կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հտ. Ա, Ս. էջմիածին, 1842:

17. **Նալբանդյան Մ.,** Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Երևան, 1945:

18. **Շ. արք. Գալուստյան,** Հայազգի սրբեր, Երևան, 1997:

19. **Շահազիզ Ե.,** Աշտարակի պատմությունը, Երևան, 1987:

20. **Վ. վրդ. Տերյան,** Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցին, «էջմիածին» ամսագիր, Ս. էջմիածին, 1963, թ. 3, էջ 22-29:

21. «Հայ ժողովրդի պատմություն», ՀԽՍՀ ԳԱ հրատ., հ. 3, Երևան, 1976, հ. 4, 1972, հ. 5, 1974, հ. 6, 1981:

22. «Հայաստանի ազգային ատլաս», հ. Բ, Երևան, 2008:

23. «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 12, Երևան, 1986:

24. «Հայոց պատմություն», ՀՀ ԳԱԱ հրատ., հ. 3, գ. Ա, Երևան, 2010:

2. Ռուսալեզու ուսումնասիրություններ

1. Есаян С. А., Калантарян А. А., Ошакан I: основные результаты раскопок 1971-1983 гг., Ереван, 1988.

2. "Большая советская энциклопедия", т. 8, Москва, 1972, т. 13, 1973, т. 16, 1974.

3. "Словарь иностранных слов", Москва, 1954.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Առաջաբան 7
2. Հեղինակի կողմից 9
3. Ներածություն 11
4. Գլուխ Ա. Օշականի ընդհանուր աշխարհագրական բնութագիրը 13
5. Գլուխ Բ. Օշականը նախաքրիստոնեական ժամանակաշրջանում 15
6. Գլուխ Գ. Օշականը IV դարում և Ամատունիների իշխանական տոհմը 22
7. Գլուխ Դ. Գրերի գյուտը և Օշականի սրբացումը 29
8. Գլուխ Ե. Միջնադարյան Օշականը 35
9. Գլուխ Զ. Օշականը XVIII-XIX դարերում 42
10. Գլուխ Է. Օշականը XX-XXI դարերում 56
11. Գլուխ Ը. Օշականի պատմաճարտարապետական հուշարձանները 60
12. Գլուխ Թ. Զբոսաշրջության զարգացման ներուժը և երթուղիները Օշականում 72
13. Վերջաբանի փոխարեն 77
14. Резюме 79
15. Summary 85
16. Օգտագործված գրականության ցանկ 83

ՄԻՔԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ

ՕՇԱԿԱՆ

2-րդ, լրամշակված հրատարակություն

Խմբագիր՝ Լենա Ասրյան

Հրատարակչական խորհրդի նախագահ և բաժնի տնօրեն՝ Նաթան արքեպս. Հովհաննիսյան

Համակարգչային շարվածքը՝ Միքայել Մալխասյանի

Սրբագրիչ՝ Արմեն Մալխասյան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2012

Չափը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 5,5 տպ. մամուլ:

Տպաքանակը՝ 500 օրինակ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ

91(47.925)
Մ-16

Մ. Մալխասյանը ծնվել է 1990 թ. սեպտեմբերի 8-ին, Երևանում: Հայրը՝ Արմեն Մալխասյանը, ինժեներ-մեխանիկ է, մայրը՝ Էվելինա Մալխասյանը, ռուսաց բանասեր, մանկավարժ:

Եղբայրները՝ Տ. Իգնատիոս վարդապետ և Տ. Աբրահամ քահանա Մալխասյանները, հոգևորականներ են:

Մ. Մալխասյանը 1997-2001 թթ. ուսանել է Երևանի թ. 67 դպրոցում, 2001-07 թթ.՝ «Քվանտ» վարժարանում: 2002-07 թթ. արժանացել է շուրջ 40 դիպլոմների՝ հաղթելով զանազան օլիմպիադաներում: 2007 թ. արժանացել է «Քվանտ» վարժարանի «Պատվավոր սան» կոչմանը:

2007 թ. հրատարակել է «Հայերն աշխարհում» և «Օշական» մենագրությունները: Նույն թվականին ընդունվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետ: 2009 թ. հրատարկել է երրորդ մենագրությունը՝ «Հակոբ Կարնեցու «Տեղագիր Վերին Հայոց» երկը՝ որպես պատմաաշխարհագրական հետազոտությունների աղբյուր» (Էրզրումի նահանգը 17-րդ դարում): 2011 թ. ընդունվել է մագիստրատուրա («հայոց պատմություն. հին և միջին դարեր»):

2008-12 թթ. Մ. Մալխասյանը հրատարակել է շուրջ 40 հոդված, արժանացել շուրջ 50 մրցանակների, այդ թվում՝ «ԵՊՀ լավագույն ուսանող - 2011» կոչմանը: